

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԻՒԱՆԱԳԷՏԸ ԿԱՐԵՒՈՐ ԿԸ ՆԿԱՏԷ ՀԱՅ- ԹՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ



ԱՄՆ-ի ժամանակաւոր
 Խաւատարմատար
 Ջոզեֆ Փեննիկոթըն

Հայաստանի մօտ Ամերիկայի Միացեալ Նահանգներու ժամանակաւոր Խաւատարմատար Ջոզեֆ Փեննիկոթըն հետ ունեցած ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, որ վրաց-օսեթական պատերազմի ժամանակ Հայաստան-Թուրքիա սահմանի կարճատեւ բացումը պէտք է նախադէպ դառնայ, որպէսզի երկու երկիրներու միջեւ վերջնականապէս բացուին սահմանները եւ վերականգնուին տնտեսական, դիւանագիտական կապերը:

Լրագրողներէն մէկու այն հարցին, թէ տարածաշրջանի վրայ

Շաբ.ը էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ ԿԸ ԳՈՐԾԵՆ ԸՆԴԴԻՍՈՒԹԵԱՆ ՆՍՏԱՑՈՅՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Վերջին օրերուն Հայաստանի իշխանութիւնները կորսնցուցած կը թուին ըլլալ իրենց ջիղերը: Երկուշաբթի, Օգոստոս 25-ին սկսեալ ոստիկաններ ու անոնց ընկերակցող քաղաքացիական հագուստով անձինք կ'այցելեն Հիւսիսային պողոտայի վրայ երկու ամիսէ ի վեր շարունակուող ընդդիմադրութեան նստացոյցի վայրը: Անոնք կը «ջարդեն» ցուցապատաւներն ու քաղաքական բանտարկեալներու լուսանկարները՝ պատճառաբանելով, թէ շէնքի սեփականատէրը բողոքած է:

«Օպերայի կողմից եւ ներքեւից եկան ոստիկաններ եւ քաղաքացիական հագուստով մարդիկ: Յարձակուեցին մեր վրայ՝ պոկելով ցուցապատաւները», յայտնած է նստացոյցի մասնակիցներէն մին աւելցնելով որ, ոստիկաններն ու քաղաքացիական հագուստով անձինք տարած են բոլոր ցուցապատաւները եւ քաղաքանտարկեալներու լուսանկարները:

Նոյնանման դէպքեր կրկնուեցան նաեւ յաջորդ օրերուն, տեղի ունեցան ձերբակալութիւնները, իսկ ցուցարարներէն մին դանակահարուեցաւ քաղաքացիական հագուստով անհատի մը կողմէ:

Տեղի ունեցող բռնութիւնները Համազգային շարժման կենտրոնի անդամ Լեւոն Զուրաբեան գնահատեց «իշխանութիւններու մտաւոր կարողութիւններու աղետալի մակարդակի վկայութիւն»:

Զուրաբեան յայտնեց, որ ոստիկանները սափրագլուխներու հետ



Հիւսիսային պողոտայի վրայ ցուցադրուող՝ Բաղաբալիկ Բանտարկեալներու նկարները, որոնք թիրախ դարձած են ոստիկաններու յարձակումներուն

պատուած են նստացոյցի մասնակիցներու բոլոր պատառները, տարած են սեղանները, որոնք կ'օգտագործուէին Քոչարեանին Հաագայի դատարան յանձնելու ստորագրահաւաքը կազմակերպելու համար: Ոստիկանները նստացոյցի անդամներուն առաջարկած են նստացոյցը շարունակել առանց պատառներու եւ վահանակներու:

«Այս ամէնը ցոյց է տալիս, որ իշխանութիւնները սարսափած են այն թափից, որ ձեռք է բերում Շարժումը, Հայ Ազգային Գոնկրէ-

սին անդամագրումը եւ Քոչարեանին Հաագայի դատարան տանելու ստորագրահաւաքը: Նրանք սարսափած են նաեւ Սեպտեմբերի 5-ին նշանակուած մեր համահայրապետական հանրահաւաքից եւ այն դժգոհութեան ալիքից, որ բարձրանում է ամէնուրեք Հայաստանում»,- լրագրողների հետ հանդիպման ժամանակ յայտարարեց Լեւոն Զուրաբեանը:

«Իշխանութիւնները ընդամէ-

Շաբ.ը էջ 4

ԹՈՒՐԲԻԱ ԱՆՀԱՆԳՍԱՑԱԾ Է ԵՕ ՊԱՅՏԸՆԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ

Միացեալ Նահանգներու նախագահի Դեմոկրատ թեկնածու Պարաք Օպամայի կողմէ՝ ձերբակուտական ձօնաշարի ընտրութիւնը՝ որպէս փոխնախագահի թեկնածու, անհանգստացուցած է Թուրքիոյ քաղաքական շրջանակները: «Թըրքիշ Տէյլի Նիւզ» (Turkish Daily News) թերթը անդրադառնալով այս մասին կը յայտնէ որ, Պայտըն իր 35 տարիներու քաղաքական գործունէութեան ընթացքին միշտ կողմ քուէարկած է բոլոր այն նախաձեռնութիւններուն, որոնք դէմ են թրքական շահերուն:

Ըստ թրքական թերթին, ինչպէս Օպաման, նոյնպէս ալ Պայտընը միշտ աջակցած են Հայաստանին եւ կողմ քուէարկած են բանաձեւին՝ «դարասկզբին Օսմանեան կայսրութեան կողմէ կատարուած մասսայական սպանութիւնները կը որակուին որպէս ցեղասպանութիւն»:

Թերթը կ'աւելցնէ որ, 65 ամեայ ձօնաշարը ամենամօտ ընկերն է ու գաղափարակիցը նախկին դեմոկրատ ձերբակուտա-



Պարաք Օպամա եւ ձօնաշարը

կան Փոլ Սարպէյնզին, որ արմատներով յոյն է եւ Յունաստանին ու Կիպրոսին վերաբերող բոլոր քննարկումներու ընթացքին դրսեւորած է հակաթրքական դիրքորոշում: Անցնող 15 տարիներու ընթացքին Պայտըն նոյնիսկ դէմ է եղած է ամերիկեան զօրքերու Թուրքիա տեղակայելու վերաբերեալ ծրագիրներուն:

Յիշեցնենք, որ Պարաք Օպամա յայտարարած էր, որ նախագահ ընտրուելէ անմիջապէս յետոյ պիտի ընդունի Հայկական Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեւը:

ՕԳՆԵՆՔ ԱՌԵՒԱՆԳՈՒԱԾ ԵՐԵՔ ՓՈՔԵՐՈՒՄ ՅԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ



Ալեքս, Կրեկ եւ Զաւէն Սիլահ

Ա. ՎԱՆԱՏՈՒՐ

Ինչպէս իրազեկ են մեր ընթերցողները, Գալիֆորնիայի մեր ազգային իրականութենէն ներս, մեր հայկական փառքերուն անհաղորդ, օտարավարի եւ իր բնոյթով իւրաքանչեւ գոյգ մը առեւանգումներ խորը յուզում, սրդողանք եւ պժգանք պատճառած էին մեր գաղութի հայ եւ օտար շրջանակներուն:

Յիշեցման կարգով կ'ուզենք յայտնել, թէ Յուլիս 4-ին նախոր-

դող շաբաթավերջին, Ժորժ Սիլահ (46), ստելով իրեն հետ ամուսնալուծուած կնկան, Զանի Մկրեանին, թէ արձակուրդի պիտի տանի գանոնք, կ'առեւանգէ իր երկու գաւակները Ալեքս Սիլահը (12) եւ Զաւէն Սիլահը (8), եւ շուտով կ'անհետացնէ իր եւ փոքրերուն հետքը:

Նոյնն է պարագան իր եղբոր՝ ձօն Սիլահին (47): ձօն, համախորհուրդ իր եղբոր Ժորժ Սիլահի

Շաբ.ը էջ 19

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՔՈՉԱՐԵԱՆ-ՍԱՐԳՍԵԱՆ. ՊԱՅՔԱՐ ԻՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՄԱՐ

Գրեթէ բոլորի համար ակնյայտ է, որ Սերժ Սարգսեանն իր նախագահութեան ընթացքում արդեն որեւորդ անգամ առիթը բաց չի թողնում Ռոբերտ Բոչարեանի հանդէպ իր առաւելութիւնը ցուցադրելու, նրա նկատմամբ, նրա հետ առնչուող իրողութիւնների նկատմամբ իր իշխանութիւնն ի ցոյց դնելու համար: Դա նաեւ բնական է, որովհետեւ եթէ դեյուրէ նախագահի պաշտօնը զբաղեցնող անձը իր շրջապատին ու հանրութեանը չհարգուի, չհամոզուի, որ ինքը նաեւ տիրապետում է դե ֆակտո իշխանութեանը, ապա նրա նախագահութիւնը կարող է լինել շատ կարճ, կամ վերածուել ուղղակի երկար միջառնակ: Հարկային եւ մաքսային ոլորտների միաւորման գործընթացը, դրա վերաբերեալ Սերժ Սարգսեանի մեկնաբանութիւնն ու Ռոբերտ Բոչարեանի մերձաւորագոյն գործիչներից մեկի՝ Վահրամ Բարսեղեանի հասցէին աննախադէպ քննադատութիւնը Ռոբերտ Բոչարեանի հեռանալուց յետոյ սեփական իշխանութեան աներկբայութեան՝ Սերժ Սարգսեանի առայժմ երեւի թէ ամենից ակնառու վկայութիւնն է:

Բայց եթէ գրեթէ բոլորի համար տեսանելի է, թէ ինչպէս է Սերժ Սարգսեանը Ռոբերտ Բոչարեանի իշխանութիւնը, եւ իշխանութեան մէջ եղած նրա ամենակարողութեան առասպելը քանդուել, դրա վրայ փորձելով կառուցել իր իշխանութիւնը, այդուհանդերձ կա հանրութեան մի գզալի մաս, որը չի հաւատում Բոչարեան-Սարգսեան այդ տարակարծութիւնների, այդ մրցակցութեան, տեղ-տեղ հակադրութեան անկեղծութեանը: Հանրութեան այդ մասը համոզուած է, որ այդ ամէնը Ռոբերտ Բոչարեանն ու Սերժ Սարգսեանը հմտորէն խողարկում են, որպէսզի հասարակութիւնը Սերժ Սարգսեանին դիտարկի Ռոբերտ Բոչարեանի համեմատութեամբ եւ վատ Բոչարեանի ֆոնին Սերժ Սարգսեանը ներկայանայ լաւ: Այդպիսով նաեւ, թերեւս, ծրագրուած է չհզոքացնել ընդդիմութեան գործօնն առկայ քաղաքական գործընթացում, եւ ստեղծել մի տպաւորութիւն, որ իրականում Սերժ Սարգսեանի հիմնական խնդիրը ոչ թէ Լեւոն Տէր-Պետրոսեանն է, իր համաժողովրդական շարժումով, այլ Ռոբերտ Բոչարեանը՝ ոչ մի կերպ չհեռանալու իր ցանկութեամբ:

Ճշմարտութիւնը երեւի թէ

ինչ որ տեղ մէջտեղում է, ինչպէս լինում է սովորաբար: Այսինքն, Ռոբերտ Բոչարեանի եւ Սերժ Սարգսեանի տարաձայնութիւններն ինչ որ հարթութեան վրայ անկեղծ են, իսկ ինչ որ առումով գուցէ փոխազդեցական, եթէ ոչ ուղղակի պայմանաւորուած: Խնդիրը երեւի այն է, թէ այդ տարաձայնութիւնների, կամ մրցակցութեան, կամ հակադրութեան որ բաղադրիչն է լինելու աւելի դոմինանտ դրանց զարգացման հետագայ ուղղութեան կանխորոշման առումով: Բանն այն է, որ Ռոբերտ Բոչարեանին այժմ ձեռնտու է, որ Սերժ Սարգսեանը լինի նախագահ: Սարգսեանը բաւական թոյլ նախագահ է, ունի յաղթահարելու լրջագոյն խնդիրներ բոլոր առումներով՝ լեզուի մոլութեան, տնտեսական քաղաքականութեան, սոցիալական հարցերի, իշխանական բուրգի վերակազմաւորման, կադրային քաղաքականութեան, ընդդիմութեան հետ յարաբերութեան, արտաքին քաղաքականութեան: Այդ իրավիճակում Սերժ Սարգսեանն ուղղակի ստիպուած է պարբերաբար դիմել Բոչարեանի ուղղակի կամ անուղղակի օգնութեանը՝ նրա կադրերի միջնորդաւորուածութեամբ, որոնք բաւական շատ են պետական կառավարման համակարգի ամենավերին օղակներում: Իսկ քանի դեռ Սերժ Սարգսեանը ստիպուած է դիմել Բոչարեանի օգնութեանը, Ռոբերտ Բոչարեանին միշտ էլ հեշտ է լինելու համակարգին համոզել, որ ինքը դեռ կա եւ ամենից վճռական հարցերում ինքն է որոշում կայացնում:

Սերժ Սարգսեանին ձեռնտու է, որպէսզի հանրութեան մօտ ստեղծուի տպաւորութիւն, որ իր հիմնական խոչընդոտը, այսինքն բաւերջը ընդդիմների հիմնական արգելքը Ռոբերտ Բոչարեանն է իր իշխանութեան ինքնացիտով: Նախ, այդպիսով Սերժ Սարգսեանը փորձում է հասարակական անգամ չհչին աջակցութիւնից զրկել Ռոբերտ Բոչարեանին, նրան դարձնել հասարակութեան աչքում իրավիճակի համար թիւ մէկ մեղաւոր եւ այդպիսով ստանձնել Բոչարեանի անվտանգութեան երաշխաւորի կարգավիճակ: Այսինքն, "եթէ ես չլինեմ, ապա քեզ հետ ով գիտէ ինչ կը լինի": Միւս կողմից, Սերժ Սարգսեանը Ռոբերտ Բոչարեանին ներկայացնելով իր ծրագրի իրականացման գլխաւոր խոչընդոտ, փաստացի փորձում է թուլացնել ընդդիմութեան ալիքը, ցոյց տա-

լով, որ ընդդիմութիւնն իր համար խնդիր չէ:

Հետեւաբար, Ռոբերտ Բոչարեանին Սերժ Սարգսեանի ազդեցութեան տակ չընկնելու, նրա ձեռքին չնայելու համար հարկ է անպայման գալ իշխանութեան դեյուրէ, քանի որ դե ֆակտո իշխանութիւնը նա աստիճանաբար կորցնելու է անխուսափելիօրէն: Չէ որ հենց ինքը Բոչարեանն էր իր վերջին հարցազրոյցում նշել, որ իշխանութիւնը ստուերային պատասխանատուութիւն չի լինում, իշխանութեան պատասխանատուութիւնը յստակ է: Հետեւաբար, ինքն էլ հենց ամենից լաւ գիտէ, որ եթէ դեյուրէ կորցնում եւ իշխանութիւնը, ապա դե ֆակտո դրանից զրկուելն ուղղակի ժամանակի խնդիր է:

Եւ հիմա Ռոբերտ Բոչարեանի համար ժամանակը խիստ դեֆիցիտ է: Ինչքան էլ հիմա Ռոբերտ Բոչարեանին ձեռնտու է, որպէսզի նախագահ լինի թոյլ Սերժ Սարգսեանը, միեւնոյն է նա հասկանում է, որ մնալով, Սարգսեանն աստիճանաբար ուժեղանում է, առաւել եւս, որ ընդդիմութիւնն էլ նրան օգնում է այդ հարցում՝ քննադատութեան հիմնական սլաքը այդուհանդերձ շարունակելով պահել Բոչարեանի վրայ: Իսկ ինչքան Սերժ Սարգսեանն ուժեղանում է, այդքան նուազում է Բոչարեանի դեյուրէ վերադարձի հարցը: Իսկ ինչ է նշանակում ուժեղ իշխանութիւն Հայաստանի պարագայում: Դա նշանակում է տնտեսա-քաղաքական բոլոր լծակների հանդէպ լիակատար վերահսկողութիւն: Եթէ մինչ այդ այդ վերահսկողութիւնն իրականացնում էր Ռոբերտ Բոչարեանը, ապա ուժեղանալու դէպքում դա անցնելու է Սերժ Սարգսեանին:

Առաջին հայեացքից թւում է, որ կարելի էր այդ հարցում յստակ պայմանաւորուել, եւ վաղեմի գիւնակիցներ Ռոբերտ Բոչարեանն ու Սերժ Սարգսեանը փոխադարձաբար կարող էին մնալ միմեանց անվտանգութեան եւ բարեկեցութեան երաշխաւորներ: Սակայն երկուսն էլ հասկանում են, որ ժամանակներն արդեն փոխուել են, ընդ որում, ինչպէս վրաց-օսական իրադարձութիւնը ցոյց տուեց, փոխուել են թէ հասարակութեան ներսում, թէ տարածաշրջանում: Հետեւաբար Հայաստանից պահանջուելու են լուրջ քայլեր: Իսկ քաղաքականութեան մէջ, այն էլ մեծ քաղաքականութեան, լուրջ

քայլերը կատարուած են փոխզուտմաների տեսքով: Ինչ որ բան գիշում ես, ինչ որ բան ձեռք բերելու դիմաց, կամ մասից հրաժարուած ես ամբողջի համար: Հետեւաբար մեծ է հաւանականութիւնը, որ Ռոբերտ Բոչարեանի եւ Սերժ Սարգսեանի մրցակցութիւնը գիշող լինելու կամ գիշուող չլինելու համար պայքար է: Նրանցից ոչ ոք չի ցանկանում լինել այն մասը, որից կը հրաժարուի միւսը ամբողջը պահպանելու համար: Հետեւաբար, նրանց միջեւ հակադրութիւնը կեղծ կամ անկեղծ չէ, թերեւս, նրանց միջեւ հակադրութիւնը պարզապէս բնական է:

Սակայն այդ ամէնի մէջ կա մի նրբերանգ, որը երեւի թէ այդքան էլ հաշուի չեն առնում Սերժ Սարգսեանն ու Ռոբերտ Բոչարեանը: Դա այն է, որ ժամանակի փոփոխութեան հետ մեկտեղ, փոխուել է նաեւ Հայաստանի իշխանութեան ուժեղութեան բանաձեւը: Այլեւս ուժեղ իշխանութիւն լինելու համար բաւական չէ տիրապետել տնտեսա-քաղաքական բոլոր լծակներին: Հիմա անհրաժեշտ է տիրապետել հասարակական տրամադրութեանը: Իսկ դրանից թէ Ռոբերտ Բոչարեանը, թէ Սերժ Սարգսեանը այժմ բաւական հեռու են, ու թէեւ Սարգսեանը փորձում է ինչ որ քայլեր անել մօտեանալու ուղղութեամբ, սակայն դրանք հենց սկզբից դատապարտուած են անյաջողութեան, քանի որ նրա այդ քայլերի հիմնական ուղղութիւնը Բոչարեանին իր համար ֆոն դարձնելն է, մինչդեռ հասարակութեան համար Բոչարեանն արդեն վաղուց անցած փուլ է, ընդ որում նաեւ հենց Սարգսեանի շնորհիւ:

ՃԷՅՄՍ ՅԱԿՈՒԲԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»

ԿԱՐԵՒՐ ԺԵՍ ՌՈՒՄԱՍՏԱՆԻՆ

ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի վերջին հարցազրոյցը Հարաւային Օսեթիայում տեղի ունեցած պատերազմի վերաբերեալ, պատկերաւոր ասած, իսկական ցնցում է առաջացրել հայ հանրութեան շրջանում:

Լեւոն Տէր-Պետրոսեանն իր այդ հարցազրոյցում կարծիք էր յայտնել, որ պատերազմը սկզբնական շրջանում վրաց-հարաւօսեթական պատերազմ էր եւ միայն հետագայում վերածուեց վրաց-ուսական պատերազմի: Աւելին, Լեւոն Տէր-Պետրոսեանն ասել էր, որ Ռուսաստանն այդ պատերազմին իր վճռական միջամտութեամբ հարաւօսեթական ժողովրդին փրկեց ցեղասպանութիւնից, ու եթէ ուսական օգնութիւնն ուշանար թէ-

կուզ վեց ժամով, այսօր Հարաւային Օսեթիա գոյութիւն չէր ունենայ: Այսպիսի ընդգծուած ուսումնասիրտ յայտարարութիւն ՀՀ առաջին նախագահից թերեւս ոչ ոք չէր սպասում, եւ այդ է պատճառը, որ հարցազրոյցը դարձել էր հայ քաղաքական եւ հասարակական շրջանակների քննարկումների համար առաջին թեման: Ընդ որում, բոլոր քննարկումներում գերիշխող եւ առաջին արձագանքը զարմանքն էր: Առաւել հետաքրքիր է, իհարկէ, թէ Լեւոն Տէր-Պետրոսեանի հարցազրոյցն ինչպէս է ընդունուել Ռուսաստանում, ՌԴ պետական եւ քաղաքական շրջանակներում: ՌԴ պետական արձագանքը պաշտօնապէս ճշդէլ, իհարկէ, հնարաւոր չէ, սակայն կրեմլինի մօտ կանգնած

մեր աղբիւրների պնդմամբ՝ հարցազրոյցը ՌԴ իշխանութիւնների մօտ դրական տրամադրութիւններ է առաջացրել, ինչը, իհարկէ, զարմանալի չէ: Ինչ վերաբերում է ուսական քաղաքական եւ հասարակական շրջանակներում առկայ տրամադրութիւններին, ապա սրանց շուրջ գրուեցինք ՌԴ Քաղաքական եւ ռազմական վերլուծութիւնների ինստիտուտի միջէթնիկական յարաբերութիւնների հիմնախնդիրների վարչութեան պետ, քաղաքագէտ Սերգէյ Մարկեդոնովի հետ: Վերջինս, գնահատելով Լեւոն Տէր-Պետրոսեանի վերոնշեալ յայտարարութիւնը, ասաց. «Առաջին հերթին, այդ յայտարար-

Շաբ.ք էջ 16



ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՂՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Ծրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆԾԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԻԷ ԱՌՆՈՅԵԱՆ՝
ՍԱՅԱ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՊԻՒԹԵԱՆ
Գե. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍԱՆ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԶԳԱԼԻ Է ԴԱՌՆՈՒՄ ԲԵՆՁԻՆԻ ՊԱԿԱՍԸ



Երեւանի մէջ գործող բենզինի կայաններէն մէկուն մօտ, ինժնաշարժերը շարժի կը սպասեն

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Երեւանի բենզալցակայաններում բենզինի դեմադրությունները հարկադարձաբար հարկադարձաբար հարկադարձաբար...

Բենզափոխադրումներ իրականացնող «Ապալէն» ընկերություններն ստանում են Գաղիկ Աղաջանյանը, մինչդեռ, երկուշաբթի օրը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում կարծիք չափանց, որ Երեւանի բենզալցակայաններում վառելիքի որոշակի պակասը շուտով կը վերանայ, քանի որ Վրաստանից Հայաստան երկաթուղին «փոքր թողունակութեամբ սկսել է աշխատել»:

«Բայց դա բաւարար է արդէն, որ, եթէ նոյնիսկ ինչ-որ դեֆիցիտ առաջացել է, շատ արագ շտկուի», - յաւելեց նա:

Գաղիկ Աղաջանյանի խօսքով, վերջին օրերին Վրաստանից վերադարձել են բենզինով բեռնուած 39 մեքենաները, դա աւելի քան 500 տոննա բենզին է, որն արդէն բաշխուել է բենզալցակայաններին:

Կէսօրին սկսել էր գործել թբիլիսի - Գորի երկաթգծի վնասուած երկաթուղային կամուրջը շրջան-

ցող մէկ այլ գիծ, որի վերանորոգման աշխատանքներն մասնակցել են նաեւ հայ մասնագէտները. այդ գնացքով Հայաստան էր տեղափոխուում 35 վազոն ցորեն: Սակայն մի քանի ժամ անց պարզուել էր, որ նոյն երկաթգծի վրայ՝ Գորիից 10 կիլոմետր դէպի Նաչուրի հատուածում, այրուել են նաւթամթերքով բեռնուած վազոններ, եւ ճանապարհը նորից անանցանելի է դարձել:

«Ամենայն հաւանականութեամբ, Հայաստան ներկրուող ցորենի վազոնները այսօր կը շարժուեն դէպի մեր հանրապետութիւն», - յաւելեց նա՝ շարունակելով. - «Ներկայ դրութեամբ, դէպի Հայաստան երկաթգծի վրայ վրացական մասում կա 178 վազոն բեռ, որից 108-ը ցորեն է, մնացածը՝ խառը բեռներ են»:

Տոնոնանը ասաց, որ Հայաստանը բեռներ ունի նաեւ Փոթիի եւ Բաթումիի նաւահանգիստներում. - «Փոթիի նաւահանգիստում կայ Հայաստան ներկրուող մօտ 6700 տոննա ցորեն եւ 93 վազոն խառը բեռ: Բենզափոխադրումները եթէ սկսեն նորմալ հունով ընթանալ, մենք առաջնահերթութիւնը տալու ենք ռազմավարական նշանակութիւն ունեցող ապրանքների ներկրմանը»:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԵՍԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՎԱՌԵԼԻՔԻ ԵՎ ՆԱԺԱԺԱՍԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՍԲ

Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխավորած Հայ Ազգային Գոնկրէսը յատուկ յայտարարութիւն է տարածել «Հայաստանում սկսուած վառելիքի ճգնաժամի կապակցութեամբ»:

«Վրաց-հարաւայեցական կարճատեւ ռազմական հակամարտութիւնը հերթական անգամ ի ցոյց դրեց ապօրինի վարչախմբի որակները՝ անգործութիւնը, անճարակութիւնն ու անտարբերութիւնը երկրի ու ժողովրդի նկատմամբ: Հակամարտութեան սկզբից քսան օր անց էլ դրա հետեւանքները շարունակուել են ծանր ազդեցութիւն ունենալ Հայաստանի տնտեսութեան վրայ: Վրաստանի տարածքով Հայաստան տեղափոխուող բեռները, գրեթէ ամբողջութեամբ, դեռեւս գտնուել են ճանապարհին եւ որեւէ երաշխիք՝ դրանց տեղ հասնելու ժամկէտների վերաբերեալ գոյուցութիւն չունի», - ասուած

է յայտարարութիւնում:

Հայ Ազգային Գոնկրէսը իշխանութիւններից պահանջում է անյապակց իրականացնել հետեւեալ միջոցառումները. - «Վերացնել հեղուկ վառելիքի ներկրման մենաշնորհը եւ հնարաւորութիւն տալ բոլոր ցանկացողներին գրադուել այդ գործով, ստեղծել մեխանիզմներ, որոնք կը կանխեն հեղուկ վառելիքի սակաւութեան պայմաններում ապօրինի գնով դրա վաճառքը եւ գերշահութների ստացումը, իսկ մինչեւ ճգնաժամի յաղթահարումը մտցնել բենզինի վաճառքի նորմաւորում, յանձնարարել պատկան մարմիններին՝ ճգնաժամի աւարտից յետոյ ապահովել առաջին անհրաժեշտութեան ապրանքների առոււազն մի քանի ամսուայ համար անհրաժեշտ պահուստներ՝ ապագայում հնարաւոր ճգնաժամերից խուսափելու համար»:

ԱՐԱՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ ԴՈՒՐՍ ԵԿԱԲ ԸՆԴՅԱՏԱԿԻՑ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԻ»:

«Այսօր իմ օրն է, անկախութեան օրն է: Ես չեմ կարող այսօր չլինել այս մարդկանց կողքին, ովքեր, իրենց հարազատների բարեկեցութեան հաշուին եկել են Հիւսիսային պողոտայ՝ անկախութիւն, ազատութիւն երգելու», - Հայաստանի երրորդ հանրապետութեան անկախութեան Հռչակագրի հրապարակման պատուին արժանացած Արամ Մանուկեանը այդ օրը տօնեց Հիւսիսային պողոտայում՝ Համաժողովրդական շարժման անդամների հետ: Ի դէպ, մարտի 1-ի դէպքերից յետոյ Արամ Մանուկեանը առաջին անգամ էր հանրութեան մէջ:



Լեւոն Տէր-Պետրոսեան եւ Արամ Մանուկեան կը ռազմագրութիւն Հիւսիսային պողոտայի վրայ

«Ա1+»- ի հետ գրոյցում նա նշեց, որ չի համարում, թէ ընդլայնուած է եղել եւ աւելացրեց. «Իմ հաշուին «արձակուրդում» էի, որի ընթացքում ստեղծագործում էի՝ մեծ թիւով յօդուածներ եմ գրել, պատմուածքներ, վիպակներ եւ երեւի ժամանակը կը գայ նաեւ ցուցահանդէս կը ներկայացնեն»:

Իր վերլուծական յօդուածներում պարունակեանը հիմնաւորում է, որ քաղաքական առումով Հայաստանը գտնուել է նորմալ վիճակում, իր իսկ բառերով՝ միտքն այսպէս է հնչում. «Հայաստանն այն երկրների շարքում է, որտեղ

այս վիճակներում ժողովուրդը միշտ յաղթում է, բացառութիւններ չկան, իշխանութիւնների պարտութիւնը անխուսափելի է: Այսքան համարձակ, հետեւողական ժողովուրդը չի կարող պարտուել»:

ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը Անկախութեան Հռչակագրի հրապարակման 17 ամեակը նշեց Հիւսիսային պողոտայում՝ իր համակիրների հետ: Առաջին նախագահի այցը անակնկալ չէր համակիրների համար: «Անկախութեամբ կը գայ: Մեր առաջնորդը բոլոր կարեւոր պահերին, այդ թւում տօներին մեր կողքին է», - Տէր-Պետրոսեանի այցից մի քանի ժամ առաջ «Ա1+»- ին վստահեցրեց Համաժողովրդական շարժման շարքային անդամներից մէկը:

ԳԱԳԻԿ ԶՅԱՆԳԻՐԵԱՆԻ ԳՈՐԾԸ ՈՒՂԱՐԿՈՒԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Յատուկ քննչական ծառայութիւնում աւարտուել է Հայաստանի գլխաւոր դատախազի նախկին տեղակալ Գաղիկ Զհանգիրեանի վերաբերեալ քրէական գործի նախաքննութիւնը, եւ գործը ուղարկուել է դատարան:

Զհանգիրեանը մեղադրուել է Քրէական օրէնսգրքի 316 յօդուածի առաջին մասով՝ իշխանութեան ներկայացուցիչ հանդիսացող՝ ոստիկանութեան կազմակերպուած յանցաւորութեան դէմ պայքարի գլխաւոր վարչութեան աշխատակիցների նկատմամբ կեանքի եւ առողջութեան համար ոչ վտանգաւոր բռնութիւն գործադրելու մէջ:

Յատուկ քննչական ծառայութեան պետի մամուլի քարտուղարի

հաղորդագրութեան համաձայն, օգոստոսի 22-ին քրէական գործը մեղադրական եզրակացութեամբ ուղարկուել է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրաւասութեան դատարան՝ ըստ էութեան քննելու:

Գաղիկ Զհանգիրեանը ձերբակալուել է Փետրուարի վերջին՝ յետընտրական իրադարձութիւնների կապակցութեամբ: Նրան սկզբնապէս մեղադրանք էր առաջադրուել Քրէական օրէնսգրքի 300 յօդուածով՝ «պետական իշխանութիւնը իւրացնելը», սակայն օգոստոսի 13-ին այդ մեղադրանքը վերացուեց՝ ապացոյցների անբաւարարութեան հիմքով, եւ նոր մեղադրանք առաջադրուեց 316 յօդուածով:

ԱՐԱՍ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆՈՒՄ ԵՆ ՄԱՆՈՒԵԼ ԳՐԻԳՈՐԵԱՆԻՆ ԵԿՍ ՆԱԽԱԳԱՅԻ ՊԱՇՏՕՆԻՑ ԶԵՈՒՅՆԵԼՈՒ ԶԱՍԱՐ»

«Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ, Հայաստանի նախկին վարչապետ Արամ Սարգսեանի համոզմամբ, իշխանութիւններն ամէն ինչ անում են, որպէսզի պաշտպանութեան նախկին փոխնախարար Մանուէլ Գրիգորեանին հեռացնեն Երկրապահ կամաւորականների միութեան նախագահի պաշտօնից՝ ԵԿՄ-ի փոխարէն «վերահսկելի», «ենթակալ» հասարակական կազմակերպութիւն ունենալու նպատակով:

«Սա միանշանակ ասում է այն մասին, որ Մանուէլ Գրիգորեանը վերջին գործընթացներում իրեն պահել է դրական առումով, եւ դա է պատճառը, որ իշխանութիւնները ուզում են նրանից ազատուել», - «Ազատութիւն» ռադիո-

կայանի հետ գրոյցում ասաց Արամ Սարգսեանը՝ շարունակելով. - «Եթէ Գրիգորեանը բաւարարել իշխանութիւններին, նրան աշխատանքից չէին ազատի»:

Մանուէլ Գրիգորեանին ԵԿՄ-ի նախագահի պաշտօնում այլ անձով փոխարինելու դէպքում, Սարգսեանի խօսքով, իշխանութիւնը «փորձելու է երկրապահ տղաներին գնել փողով, պաշտօններ առաջարկելով»:

- «Սպաննելու է նրանց մէջ ընկերութեան, արդարութեան ոգին»:

Նախկին վարչապետի խօսքով, Մանուէլ Գրիգորեանը ինքն էլ որոշակի կազմակերպչական «բաւարարական լուրջ աշխատանք է կատարում, որ նման բան տեղի չունենայ»:

ԼՈՒՐԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ 10-15 ՕՐՈՎ ԲԱՑԵԼ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ

Անցած շաբաթավերջին Հայաստանի, Վրաստանի, Միացնալ Նահանգների եւ Թուրքիայի մի շարք հասարակական կազմակերպությունների ու հետազոտական կենտրոնների ներկայացուցիչները կոչով դիմել են Թուրքիայի, Ատրպեյձանի, Վրաստանի եւ Հայաստանի կառավարություններին՝ «բացել հայ-թուրքական սահմանը գոն 10-15 օր՝ արձագանքելու կողմասուստեղծած արտակարգ իրավիճակին»:

«Վրաստանի պատերազմի արդիւնքում Հարաւային Կովկասի երկրները յայտնուել են նոր վտանգների ու մարտահրաւէրների յորձանուտում, որոնց պէտք է հրատապօրէն դիմակայել: Այս ճգնաժամի հետեւանքով, որը չլուծուած հակամարտութիւնների պատճառով տանում է դէպի փակուղի, տարածաշրջանը գրկուած է ապրանքափոխադրման կենսական երակներէրից մէկից», - ասուած է շաբաթօրը հրատարակուած կոչում: - «Ճգնաժամային այս իրավիճակը պէտք է ստիպի մեզ իրատեսօրէն գնահատել իրավիճակը եւ նախաձեռնել համագործակցութեան նոր ժամանակաշրջանի ձեւաւորման գործընթաց: Թուրքիայի, Ատրպեյձանի, Վրաստանի եւ Հայաստանի կառավարութիւնների համար եզակի հնարաւորութիւն է ստեղծուել ապացուցելու, որ իրենք

լաւ հարեւաններ են, ովքեր պատրաստ են նպաստել տարածաշրջանային խաղաղութեանն ու կայունութեանը: Մենք խնդրում ենք նրանց համախմբուել եւ անյապաղ բացել տարածաշրջանի երկաթուղային հաղորդակցութեան ցանցը»:

«Խնդրում ենք մեր առաջնորդներին ցուցաբերել պետութեան կառավարման իրենց հմտութիւնները անհանգիստ ու անկայուն այս ժամանակներում եւ կանխել տարածաշրջանում անվտանգութեան մթնոլորտի հետագայ զարգացումը», - ասուած է «Ձեռք մեկնենք հարեւաններին» վերնագրուած կոչում, որը ստորագրել են 11 կազմակերպութիւնների՝ այդ թւում Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, «Ասպարէզ» լրագրողների ակումբի (Հայաստան), Հայ-թուրքական բիզնես կարգացման խորհրդի եւ GAYA Հետազոտական ինստիտուտի (Թուրքիա) ներկայացուցիչները, Միացնալ Նահանգների Կոլումբիայի համալսարանի Մարդու իրաւունքների հետազոտութեան կենտրոնի, ԱՄՆ-Ռուսաստան եւ Վրաստանի յարաբերութիւնների հետազոտական իմբի համատնօրէն Դեյվիդ Ֆիլիպսը, մի շարք այլ կազմակերպութիւնների ներկայացուցիչներ Հայաստանից, Վրաստանից ու ԱՄՆ-ից:

ՈՍ Տ ԹՈՒՐԲ ՔԱՂԱՔԱԳԵՏԻ՝ ԹՈՒՐԲԻԱՆ ՊԵՏՔ Ե ՊԱՀ ԱՌԱՋ ԲԱՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԸ

Թուրք փորձառու դիւանագէտ եւ քաղաքագէտ Մեհմեդ Ալի Բայրը, ով 1999 թուին Թուրքիայի 9-րդ նախագահ Սուլէյման Դեմիրելի արտաքին գործերով խորհրդականն է եղել, իսկ 90-ականներին՝ Թուրքիայի դեսպանը Բաքուում, յայտարարել է, որ Թուրքիան պէտք է պահ առաջ բացի Հայաստանի հետ սահմանը:

Թուրքական «Միլիէթին» տուած հարցազրոյցում Բայրն ասել է, որ Թուրք-հայկական սահմանի փակ մնալու ամենամեծ վնասը Թուրքիան է կրում:

«Քանի այդ սահմանը փակ է, Հարաւային Կովկասում Թուրքիայի գործողութիւնների ոլորտը սահմանափակ կը լինի, եւ Անգարան չի կարող աշխարհում հանդէս գալ որպէս արդարացի եւ միջնորդ պետութիւն: Անգարան պէտք է նախա-

ձեռնող լինի այդ ռազամավարական որոշման մէջ: Առանց որեւէ նախապայմանների բացելով Հայաստանի հետ սահմանը, Թուրքիան պէտք է թուլացնի պատմութեան հետ կապուած հայկական պնդումները: Եթէ Թուրքիան չի ցանկանում կորցնել դերակատարութիւնը Հարաւային Կովկասում, պէտք է խաղաղ մեծ տէրութեան իր այդ դերը», - համոզմունք է յայտնել Բայրը:

Ըստ Թերթի Բայրը եղել է Թուրքիան ներկայացնող առաջին դիւանագէտը Բաքու-Թբիլիսի-Ջէջհան խողովակաշարի կառուցման բանակցութիւններում, եւ տարածաշրջանի հետ կապուած Բայրի փորձը շատ կարեւոր է «Կովկասեան միութեան» թէզը օրակարգ մտցրած Թուրքիայի կառավարող Արդարութիւն եւ զարգացում կուսակցութեան համար:

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ ԿԸ ԳՈՐԾԵՆ

Շարունակուած էջ 1-էն

նր եւս մէկ անգամ ապացուցեցին, որ գաղափարներին ի վիճակի են պատասխանել միայն բիրտ ուժով: Արդեօք աւելի ողորմելի բան կա՞ջ, քան պլակատների դէմ պատերազմող բռնապետութիւնը: Ներքաղաքական պայքարում բիրտ ուժով ձեռք բերած յաղթանակները Պիւռոսեան յաղթանակներ են, ինչի լաւագոյն ապացոյցն է ետմարտի մէկկեան քաղաքական իրողութիւնը:

Քաղաքականապէս պարտուելով՝ իշխանութիւնները նորից ցանկանում են պայքարը տեղափոխել ուժային դաշտ», - ըստ Ջուրաբեան: Համաժողովրդական շարժման բոլոր անդամներուն Ջուրաբեանն

կոչ ըրաւ զսպուածութիւն դրսեւորել եւ աւելցուց. «Հայաստանի քաղաքացիների լաւագոյն պատասխանը բռնապետութեան ջղաձգումներին կը լինի Սեպտեմբերի 5-ի հանրահաւաքին ակտիւ մասնակցութիւնը: Կատարեալ բարոյագրկութեան եզրին գտնուող բռնապետական բուրգը, միեւնոյն է, փլուզուելու է, եւ մեր քաղաքացիական հասարակութեան որդեգրած խաղաղ սահմանադրական ճնշման մարտավարութիւնը յաղթելու է, ամէն հօր հանրահաւաք միայն մօտեցնում է այդ երանելի պահը»:

Երեւանի քաղաքապետարանը Օգոստոս 25-ին մերժած է Սեպտեմբեր 5-ի հանրահաւաքի եւ երթի կայացումը:

ԱԲԽԱԶԻԱՅԻ ԵՒ ՕՍԻԱՅԻ ԳԱՆԱՉՈՒՄԸ Ի՞ՆՉ ԿԸ ՏԱՅ ԼՂՅ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ցէ»: Ռուսաստանի կողմից Աբխազիայի եւ Հարաւային Օսիայի ճանաչման փաստը ինչպէ՞ս կ'ազդի Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան հիմնախնդրի լուծման վրայ: Ռուսաստանի Պետդուման աչօր կայացած յատուկ նիստում միաձայն հաւանութեան է արժանացրել դիմումը, որով խնդրում են նախագահ Դմիտրի Մեդվեդեւին՝ դիտարկել Աբխազիայի եւ Հարաւային Օսիայի՝ «որպէս ինքնուրոյն, ինքնիշխան եւ անկախ պետութիւններ» ճանաչելու հարցը:



Հարաւային Օսիայի մէջ ուրախութեամբ կրակոցներ

«Ողջունելով Հարաւային Օսիայի եւ Աբխազիայի ժողովուրդների ձգտումը անկախութեան, խաղաղութեան ու կայունութեան, ինչպէս նաեւ հաշուի առնելով Հարաւային Օսիայի եւ Աբխազիայի բազմաթիւ դիմումները անկախութեան ճանաչման մասին՝ այդ թւում Օգոստոսի 22-ին եւ 24-ին ստացուածները, Դաշնութեան խորհուրդն առաջարկում է ճանաչել Հարաւային Օսիայի եւ Աբխազիայի անկախութիւնը», - ասուած է փաստաթղթում:

«Վաղ է խօսել այդ մասին, քանի որ Դաշնութեան խորհուրդը եւ պետդուման դիմում են նախագահին ճանաչելու խնդրանքով: Կա ճանաչելու կոչ, որովհետեւ խորհրդարանները չեն ճանաչում նախագահական երկրներում, ինչպիսին Ռուսաստանն է, այլ դա արտաքին յարաբերութիւնների ոլորտն է եւ պատկանում է նախագահին: Դեռ պէտք է մի քիչ համբերել, մինչեւ կը տեսնենք Ռուսաստանի նախագահի արձագանքը պարլամենտական կոչին եւ առաջարկին», - «Ա1+»-ին ասաց ՀՀԿ պատգամաւոր Արմէն Աշոտեանը:

Սակայն եթէ ճանաչի, ապա ըստ Աժ պատգամաւորի՝ առաջինը մենք կ'ունենանք բաւականին զօրեղ փաստարկ առ այն, որ Կոստովն նախադէպ է իրականում եւ այդ նախադէպը շարունակուելու է ԼՂՀ համար: Ըստ նրա, փաստացի Աբխազիայի ու Հարաւային Օսիայի անկախացմամբ մենք կ'ունենաք տարածաշրջանում նոր ստատուս քվոյի հաստատման իրավիճակ. «Ըստ որի՝ կը մնայ միայն ԼՂ-ը որպէս չլուծուած հակամարտութիւն, չճանաչուած պետութիւն եւ կարծում եմ՝ այստեղ մեր դիւանագիտական ապարատը լրջագոյն աշխատանք ունի անելու, որ ԼՂՀ-ը մաքսիմալ օգտուի այդ ճանաչման հնարաւոր գործընթացի դիվի-

դենտներից»: Արմէն Աշոտեանը այստեղ միաժամանակ մարտահրաւէրներ եւ սպառնալիքներ է տեսնում:

«Իրականում Հայաստանի եւ Վրաստանի աշխարհաքաղաքական յարաբերութիւնները Հայաստանի համար որոշակի զսպող գործօն են լինելու այդ երկու չճանաչուած երկրների ճանաչման գործընթացը դէպի հայկական կողմ շուռ տալու համար, որովհետեւ մինչեւ բացուած է հայ-թուրքական սահմանը վրացական տրանզիտային միջանցքը մեզ համար շատ մեծ քաղաքական արժէք է, քան Հայաստանի կողմից Աբխազիայի եւ Հարաւային Օսիայի հնարաւոր ճանաչումը», - նկատեց Արմէն Աշոտեանը:

Իսկ «Ժառանգութեան» պատգամաւոր Արմէն Մարտիրոսեանի կարծիքով՝ դա որոշակի ազդեցութիւն կը թողնի, բայց, այնուամենայնիւ, մենք պէտք է չստակ մի բան հասկանանք, որ Ղարաբաղում որեւէ կերպ հնարաւոր չի իրականացնել այն գործընթացը, ինչ Օսեթիայում, Աբխազիայում, որովհետեւ. «Առաջին հերթին Ռուսաստանը դա երբեք չի շեշտել, նոյն հարթութեան մէջ չի տեսել, բացի այդ՝ Ռուսաստանը ստրատեգիական գործընկերութեան պայմանագրի մէջ է նաեւ Ատրպեյձանի հետ, ուստի չեմ կարծում, որ որեւէ համեմատութիւն կը լինի»: Վերջինս կարծիք յայտնեց, որ ՀՀ կառավարութիւնը հնարաւոր է ընդունի Աբխազիայի եւ Հարաւային Օսիայի անկախութիւնը, բայց պէտք է աւելի շուտ արուէր, արուէր այն ժամանակ, երբ կար Կոստովոյի խնդրը, երբ մենք կարող էինք նախադէպ հանդիսանալ եւ Կոստովոյի հետ գուզընթաց գնար մեր խնդրի քննարկումը, մինչդեռ մենք եւս մէկ անգամ ուշացանք. «Իսկ այդ պարագայում եթէ ճանաչենք ամբողջ աշխարհի կողմից ընկալուելու է որպէս ռուսական կողմից արուած քայլի հետագայ ընթացք»:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԻՒՆԱԳԵՏԸ ԿԱՐԵՒՐ ԿԸ ՆԿԱՏԵ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Շարունակուած էջ 1-էն

ինչպէս կրնայ անդրադառնալ Ռուսաստանի կողմից Օսեթիայի եւ Աբխազիայի անկախութեան ճանաչումը, Ջոզէֆ Փենինկիլըն խուսափեցաւ յստակ պատասխան տալով ու ըսաւ. -

«Այդ մասին դատողութիւնները ձեզի կը ձգեմ: ԱՄՆ կ'ընդունի Վրաստանի տարածքային ամբողջականութիւնը. կոչ կ'ընեն միայն, որպէսզի բոլոր կողմերը՝ ներառեալ նաեւ Ռուսաստանը, պահպանեն իրենց պարտականութ-

իւնները հրադադարի շրջագիծէն ներս»:

Այն հարցին, թէ տարածաշրջանի վերջին դէպքերը ինչպէս կրնան անդրադառնալ Հայաստանի եւ Ատրպեյձանի յարաբերութիւններու վրայ, ամերիկացի դիւանագէտը ըսաւ. «Մենք տեսանք, թէ ինչ աղետալի հետեւանքներու բերաւ վրաց-օսեթական պատերազմը, այդ տեսելով՝ Հայաստանի եւ Ատրպեյձանի դեկավարները պէտք է գիտակցին, որ ռազմական գործողութիւնները լուծում չեն»:

ԱԶԳԱՅԻՆ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ «ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՈՒԵԼ Է ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆԸ

2008թ. Օգոստոսի 19-ին ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Ա. Համբարձումեանը, նախարարութեան աշխատակազմի ընտանիքի, կանանց եւ երեխաների վարչութեան պետ Լ. Ղազարեանը եւ այլ աշխատակիցներ կատարեցին շրջայց խարբերդի մասնագիտացուած մանկատանը:

Այցի նպատակն էր ծանօթանալ օրերս աւարտուած մանկատան երեք սենեակների վերանորոգման աշխատանքներին, որոնք կատարուել են «Հայաստանի ծնողագուրկ եւ հաշմանդամ երեխաների Սուրբ Ծննդի» բարեգործական հիմնադրամի կողմից, որի նախագահն է Յովհաննէս Բալաեանը Ամերիկայի Միացեալ Նահանգներից:

Նա նաեւ «Քաջ Նազար» ամսագրի գլխաւոր խմբագիրն է, որը լոյս է տեսնում ԱՄՆ-ում:

Մանկատան տնօրէն Հ. Բալասանեանը մանրամասն ներկայացրեց վերանորոգուած սենեակները, մանկատան յարմարութիւնները, բակը, կաթսայատունը, նոր մասնաշէնքի կառուցման աշխատանքների ընթացքը:


Նախարարին երեխաները ողջունեցին երգ ու պարով, որից յետոյ նա շրջեց մանկատան բոլոր սենեակներով եւ տեղում ականատես եղաւ երեխաների աւօրեային: Ներկայացուեցին երեխաների անդիբեաշիման կարգը, սանիտարահիգիենիկ պայմանները, բուժօգնութեան համապատասխան ձեւերը:

Շրջայցի մասնակիցները եղան նաեւ վերականգնողական կենտրոնի ֆիզիոթերապիայի սենեակում, որտեղ ֆիզիկական մարզման շնորհիւ վերականգնուած են երեխայի մարմնական որոշակի ֆունկցիաները:

Կենտրոնը վերանորոգուել է Շուէյցարիայի UBS-Union Բանկի յաճախորդներից մէկի նուիրատուութեան շնորհիւ:

Շրջայցին յաջորդեց քննարկում մանկատան զարգացման նոր ծրագրերի, ՀՀ խորը մտաւոր կարիքներով երեխաների հիմնահարցի ամբողջական լուծման սխեմայի վերաբերեալ, որը կ'ապահովի երեխայի տուեալ հաստատութիւնից դէպի հասարակութիւն տանող ճանապարհի արդիւնաւէտութիւնը, հնարաւոր անկախութեան եւ ինքնուրոյն ապահովումը:

«Հասարակութեան իւրաքանչիւր անդամ պէտք է իրագեկ լինի նմանատիպ հաստատութիւնների գո-



յութեան մասին եւ անմիջական մասնակցութիւն ունենալ ներսում կատարուող աշխատանքներին, անհանգստացնող խնդիրների ու հարցերի լուծման գործընթացին: Այս երեխաները նոյնպէս մեր հասարակութեան լիարժէք անդամներն են, որոնք կարիք ունեն մարդկային ջերմութեան, խնամքի եւ հոգա-



ծուութեան», - իր խօսքում նշեց նախարարը:

Ի դէպ՝ խարբերդի մասնագիտացուած մանկատունը ստեղծուել է 1953թ. որպէս սոցիալբուժարտօրջապահական հաստատութիւն, որտեղ իրականացուած են կենտրոնական ներդրային համակարգի օրգանական եւ ֆունկցիոնալ ախտահարումներ, բնածին ու ձեռքբերուած ֆիզիկական արատներ ունեցող 6 տարեկանից բարձր հաշմանդամ երեխաների շուրջօրեայ խնամքը: Մանկատանը խնամուողների ընդհանուր թիւը 258-ն է, այդ թւում՝ 144 տղայ եւ 114 աղջիկ (16 խումբ, իւրաքանչիւրում մօտաւորապէս խնամուում եւ դաստիարակուում է 16 երեխայ): Խմբերի բաժանումը կատարուում է ըստ հիւանդութիւնների տեսակի (ախտորոշման) եւ տարիքի:

Մանկատան սաների համար կազմակերպուում են շուրջօրեայ



խնամք, երեխայի ուսուցում՝ հնարաւորութիւնների շրջանակներում ինքնապասարկման հմտութիւններ, ֆիզիկական արատների եւ

հոգեբանական խնդիրների կորեկցիա, կանխարգելում եւ բուժում, վերականգնողական տարբեր միջոցառումներ:

ՄԱՅԱՑԱԾ Է ՍԵՐԳԷՅ ՄԵՐԳԵԼԵԱՆԸ

Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիան եւ Գիտութեան Պետական Կոմիտէն կը տեղեկացնեն, որ մահացած է ակադեմիկոս Սերգէյ Մերգելեանը:

«Խորին վշտով տեղեկացանք ականաւոր գիտնական եւ քաղաքացի, հայկական գիտութեան դասական, ակադեմիկոս Սերգէյ Մերգելեանի մահուան մասին», - ըստուած է Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի եւ Գիտութեան Պետական Կոմիտէի հաղորդագրութեան մէջ: - «Ակադեմիկոս Սերգէյ Մերգելեանի մահը անդառնալի կորուստ է ողջ հայ ժողովուրդի եւ առաջին հերթին, Հայաստանի գիտական հանրութեան եւ մտաւորականութեան համար»:

1950-ական թուականներու կէսերուն Սերգէյ Մերգելեանը Հայաստանի մէջ ստեղծել է կիրառական մաթեմատիկայի եւ հաշուողական տեխնիկայի գիտատեխնոլոգիական նոր ուղղութիւն, որ յետագայում մեծ համբաւ բերաւ Հայաստանին: Անոր ղեկավարութեամբ ստեղծուեցաւ մաթեմատիկական մեքենաներու երեւանի գիտահետազոտական ինստիտուտը, իսկ յետագային՝ նաեւ արտադրական ձեռնարկութիւններ, սկսաւ ժամանակակից հաշուողական մեքենաներու արտադրութիւնը:

Սերգէյ Մերգելեանը 21 տարեկանին դարձած է գիտութիւններու դոկտոր, 25 տարեկանին՝ ԽՍՀՄ-ի եւ Հայկական ԽՍՀ-ի Գիտութիւններու ակադեմիայի թղթակից անդամ, 28 տարեկանին՝ Հա-



յաստանի Գիտութիւններու ակադեմիայի ակադեմիկոս: Եղած է Հայաստանի Գիտութիւններու ակադեմիայի փոխ-նախագահը, Գիտութիւններու ակադեմիայի եւ Երեւանի պետական լսարանի հաշուողական կեդրոնի հիմնադիրը եւ առաջին տնօրէնը, ԵՊՀ-ի ամպլոնի վարիչ: Արժանացած է Հայաստանի Հանրապետութեան բարձրագոյն պարգեւին՝ Մեսրոպ Մաշտոցի շքանշանի: Վերջին տարիներուն ականաւոր գիտնականը կ'ապրէր էր Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ:

Այս տարի կը լրանար Սերգէյ Մերգելեանի ծննդեան 80-ամեայ յոբելեանը:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի գորակցութիւն եւ ի օգնութիւն քաղբանտարկեալներին ու նրանց ընտանիքներին

Սիրելի Հայրենակից՝

Լեւոն Տէր-Պետրոսեանի աջակցութեան ԱՄՆ-ի կենտրոնի նախաձեռնութեամբ՝ Ուելզ Ֆարկո (Wells Fargo) բանկում բացուել է ("Political Prisoners 2008") «Քաղաքական Բանտարկեալներ-2008» հաշուեհամար հա. 3240539928 որին կարող էք փոխանցել ձեր նիւթական օժանդակութիւնը:

Վերոնշեալ հաշուեհամարում հաւաքուած գումարները ամբողջութեամբ փոխանցուելու են Երեւան, Հայաստանի քաղբանտարկեալների ընտանիքների օգնութեան համար գործող՝ Արշալիր Բոգինեանի հաշուեհամարին:

Ձեր նուիրատուութիւնները կարող էք կատարել անձամբ՝ Ուելզ Ֆարկո բանկի ցանկացած բաժանմունքում, ինչպէս նաեւ ուղարկել կամ անձամբ բերել Լեւոն Տէր-Պետրոսեանի աջակցութեան ԱՄՆ-ի կենտրոն, հասցեն՝ 440 W. Colorado, Suite 211, Glendale CA 91204.

Լեւոն Տէր-Պետրոսեանի Աջակցութեան ԱՄՆ-ի Կենտրոն
Հեռ: 818-548-1915

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԵՍՈՔՐԱԹՆԵՐՈՒ ԶԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Երբ այդ յօդուածը լոյս տեսնէ «Մասիս»-ի յաջորդ թիւին մէջ, շատ հաւանօրէն Տեմոքրատ կուսակցութեան ընտրական համագումարը, որ տեղի կ'ունենայ Քոլորատոյի Տէյնվեր քաղաքին մէջ, իր աւարտին կը հասնի: Սոյն համագումարի աւարտին, իր բոլոր գոյնգոյն արտայայտութիւններէն, եւ «ալա-ամերիկեան» փոշիկներու տեղատարափէն ետք, կը հաստատուի սոյն կուսակցութեան ընտրական «ticket»ը, նախագահի եւ փոխ-նախագահի անուններով: Այս անշուշտ կը նշանակէ փոքրամասնական, սեւամորթ եւ խառնածին ծագումով, նախագահական թեկնածուի եւ իր նշանակած փոխ-նախագահի թեկնածուի յաղթանակը, երկար եւ յոգնեցուցիչ նախընտրական պայքարէ մը ետք, որու ընթացքին, կուսակցութեան երկու թեկնածուները, Պարաք Օպամա եւ Հիլըրի Գլինթըն բոլորն ալ պայքար մղեցին առաջին տեղը գրաւելու համար: Ի վերջոյ յաղթական պիտի ելլէր Պարաք Օպաման, որ ամերիկեան պատմութեան առաջին նախագահութեան սեւամորթ թեկնածուն կը հանդիսանայ:

Ինչ կը վերաբերի փոխ-նախագահի նշանակեալ թեկնածուին, ան ամերիկեան եւ միջազգային քաղաքական շրջանակներու կողմէ ճանչցուած, եւ 1972-էն ի վեր ամերիկեան Գոնկրէսի անդամ, եւ ընտրական եւ արտաքին գործերու յանձնախումբերու նախագահ ձօնաշարն է, ուրեմն թրծուած, փորձառու եւ ամերիկեան քաղաքական կեանքի բոլոր, կամ գրեթէ բոլոր գաղտնիքներուն տեղեակ անձնաւորութիւն մըն է, 7-8 անգամ սենաթը վերըտրուելով Տէլլուէր նահանգէն: Ինչ կը վերաբերի տարիքին, մինչ Օպամա 47 տարեկան է, Պայտըն հասած է 65-ի, այնքան մը որ իր սպիտակ մազերուն բերումով, գինք նոյնիսկ կոչեցին Օպամայի «մեծ հայրը» ըլլալու պատկերով:

ԻՆՉՈՒ ԶՕ ՊԱՅՏԸՆ
Տէլլուէրի այս սենաթըրի նշանակումը փոխ-նախագահի պատշոնին, իր ընտրական հաշիւները ունէր, որոնց մէջ կը մտնէին հետեւեալ երկու գլխաւոր հաշիւները:

Առաջինը այն էր, որ սկիզբէն ի վեր, ոչ միայն հանրապետականներու կողմէ, այլ նոյնիսկ տեմոքրատներու կողմէ, յատկապէս Հի-

լըր Գլինթընի կողմէ, Պարաք Օպամա կը նկատուէր յարաբերական անփորձ մը Ամերիկայի նման երկրի մը ղեկավարութիւնը ստանձնելու: Ուրեմն ձօնաշարն սոյն քննադատութեան չէզոքացման պիտի նպաստէ, թէ ներքին եւ թէ արտաքին քաղաքական հարցերու նկատմամբ: Այս կը վերաբերի նաեւ Օպամայի սենաթէն ներս ունեցած հազիւ 3-4 տարիներուն, որուն դիմաց Պայտըն ունի աւելի քան 30 տարիներու փորձառութիւն: Պայտընի միջազգային հարցերու վերաբերեալ ծանօթութիւնը եւս լրացուցիչ մէկ ազդակը պիտի հանդիսանայ Պարաք Օպամայի ենթադրեալ եւ կամ իրական անփորձութեան արտաքին գեանի վրայ:

Երկրորդ, տեսնուած է Օպամայի մօտ իր ժողովրդականութիւնը կաթոլիկ համայնքի, եւ միջին դասու աշխատաւորու, ինչպէս նաեւ իգական սեռի որոշ տարիքի անդամներու մօտ, որոշ տղարութիւն արձանագրած էր նախընտրական շրջանին: Ուրեմն ընտրական այս խմբաւորումներու մօտ, ձօնաշարն, որ կաթոլիկ համայնքի կը պատկանի, եւ ծանօթ է իբրեւ միջին դասու պաշտպան անձնաւորութիւն, պիտի յաջողի վերոյիշեալ ընտրական խումբերը լծել Օպամայի կառքին: Այս գծով, տակաւին յստակ չէ, մինչ այս տողերը կը գրուին, թէ Ի՞նչ բովանդակութիւն եւ խորք պիտի ունենան, Հիլըրի, եւ իր ամուսնոյն, նախկին նախագահ Պիլ Գլինթընի ելոյթները, համագումարի շրջ եւ Յոգ օրերուն: Թէեւ այս երկուքն ալ, Օպամայի նախընտրական նշանակումէն ետք, խոստացան նեցուկ կանգնիլ իրեն, ապահովելու համար իրենց կուսակցութեան յաղթանակը ընտրութեանց ընթացքին, Հիլըրի Գլինթըն շարունակ կը շեշտէր թէ 18 միլիոն ամերիկացիներ իրենց ձայները իրեն տուած էին, եւ ասոնց փոխարէն ինք, այսինքն Հիլըրին, իրաւունք ունէր որոշ ակնկալութեան, թերեւս ձօնաշարն փոխարէն, փոխ-նախագահի պաշտօնին: Ինչ որ ալ ըլլայ Հիլըրի քաղաքական կեանքի յետագայ ընթացքը, ան արդէն արձանագրած է մեծ յաղթանակ իբրեւ նախագահական առաջին կին թեկնածու եւ գրեթէ հասած իր երազին: Ծատ հաւանօրէն, առանց հրապարակաւ ցոյց տալու Տէր եւ Տիկ Գլինթընները թէ նախանձի, եւ թէ զայրոյթի հոգեվիճակներ ունին Պարաք Օպամային դէմ, որ իրենցմէ խլեց



Տեսնոքրաք կուսակցութեան ընտրական համագումարը

գրեթէ իրենց ակնկալած յաղթանակը, եւ Հիլըրիին զլացաւ փոխ-նախագահի պաշտօնը: Այս ուղղութեամբ, Հիլըրիի կողմնակից որոշ իգական խմբակցութիւններ կրնան նոյնիսկ որոշ «անախորժութիւններ» պատճառել համագումարի ընթացքին, իրենց նախասիրած թեկնածուն, Հիլըրին պաշտպանելով: Սակայն թէ Օպաման, թէ տեմոքրատները առհասարակ մեծ համարում ունին Հիլըրիին նկատմամբ, որուն քաղաքական դերը երբեք նուազած կամ վերջացած չի նկատուիր:

ձօնաշարն ընտրութեամբ, Օպամա նաեւ արձանագրեց հետեւեալ յաջողութիւնները: Պայտըն ամերիկեան հասարակութեան ծանօթ է ոչ միայն իր ճարտասանութեամբ, ինչպէս Օպաման, այլ յաճախ «բուռն, կոպիտ» ելոյթներով, որոնք կը վերագրուին իր նկարագրի բուռն հանգամանքին, եւ ճշմարտախօսութեան: Այս յատկանիշը մասնաւորաբար անհրաժեշտ է տրուած ըլլալով որ հանրապետականներու թեկնածու ձօն Մքքէյն, որ տակաւին չէ ընտրած իր փոխ-նախագահի թեկնածուն, մասնաւոր վերջերս, բաւական չանդուզ կը քննադատէր Օպաման, իբրեւ անփորձ եւ ոչ արժանի Ամերիկայի նախագահութեան, Պայտըն լաւ կը ճանչնար Մքքէյնը, իբրեւ երկար տարիներու բարեկամ, եւ ինչպէս իր պաշտօնի ընդունման ճառին մէջ շեշտեց, որոշապէս ցոյց տալով Մքքէյնի Պուշի 8 տարիներու նախագահութեան 95 առ հարիւրի համաձայնութիւնը, եւ եթէ յաջողի, Պուշի իշխանութեան Յոգ շրջանը հանդիսանալու վտանգը:

Թէեւ ընդհանուր գիծերու մէջ, Պայտըն համաձայն է Օպամայի որդեգրած եւ տեմոքրատներու հետապնդած քաղաք-տնտեսական ծրագրին, այսինքն արտաքին, ներ-

քին տնտեսական, բժշկա-առողջապահական, եւ այլն, Պայտըն որոշ հարցերու մէջ տարակարծիք է իր «վարպետին» եւ մօտիկ անցեալին չէ պահած իր կարծիքը: Այս պարագան սակայն նոյնիսկ փնտրուած յատկանիշ մը կը նկատուի Օպամայի կողմէ, եւ կրնայ նպաստել իր իշխանութեան յառաջխաղացքին: Մէկ հարցի մէջ, Պայտընի ընտրութիւնը, ոմանց կողմէ լուրջ «շեղում» կը նկատուի, այն է որ եթէ Օպամա կը փնտրէր փոփոխութեան «ասպետներ», յատկապէս Ուաշինթընի «կորսուած» ըլլալու հանգամանքը ուղղելու համար, ձօնաշարն, ինք եւս, 1972-էն ի վեր մաս կը կազմէ, եւ ուրեմն բաժին ունի Ուաշինթընի «կորսուածութեան»: Առանց շեշտելու այս պարագային վրայ, Օպամա Պայտընէն կ'ակնկալէ գործօն մասնակցութիւն մը իր փոփոխութեան ծրագրին ներս, եւ վստահօրէն պիտի ստանանայ անոր նեցուկը:

Սոյն յօդուածի աւարտին, մեզի հայերու համար, ողջունելի երեւոյթը այն է որ թէ Պարաք Օպամա, եւ թէ ձօնաշարն հայկական ցեղասպանութեան ճանաչման ի նպաստ արտայայտութիւն ունեցած են, եւ մաղթելու է որ ասոնք եւս չնմանին Ռէյչլընէն ասդին, միւս նախագահներու, յատկապէս Գլինթընի եւ Պուշի, դիմադարձութեան ընտրուելէն ետք: Ամէն պարագայի տակ, մենք մաղթողն ենք որ տեմոքրատ կուսակցութիւնը, իր թեկնածուներով եւ նաեւ յատկապէս Նանսի Փըլլոսիններով, սոյն կարեւոր ընտրութեան յաղթական դուրս կու գան թէ ամերիկացի ժողովուրդին, որուն մաս կը կազմէ աւելի քան մէկ միլիոն հայութիւնը, եւ թէ մասնաւորապէս Ցեղասպանութեան ճանաչման գործընթացի յաջող ձեռքբերումին համար:

THE QUALITY AND SAFE CHOICE...

AGBU PASADENA HIGH SCHOOL

2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104
(CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET)

**2008-2009 SCHOOL YEAR
OPEN ENROLLMENT
GRADES: 9-12**

COLLEGE PREPARATORY ACADEMIC PROGRAM
HONORS & AP LEVEL INSTRUCTION

FOR MORE INFORMATION, PLEASE CALL 626-794-0363

“The Friends of Armenian Arts” Proudly Presents
“BRAVO” TBILISI ARMENIAN THEATRE

TBILISI'S PETROS ADAMYAN STATE ARMENIAN DRAMATIC THEATRE

«Կեցցէ՛»

Exclusive stop in Los Angeles during a National Tour

Թիֆլիսի Պետրոս Ադամյանի անուան Պետական Հայկական
 Դրամատիկական Թատրոնի հիւրախաղերը Միացեալ Նահանգներում

Թող Որ Այս ներկայացումները Մեր Սրտերը Գերե՛....

Let These Performances Touch Our Hearts



Pepo

Պէպօ

SATURDAY SEPTEMBER 6, 7:00 P.M.



**My
 Daughter's
 Fiances**

**Աղջկա
 Փեսայուները**

SUNDAY SEPTEMBER 7, 7:00 P.M.



**Love
 Under
 The Elms**

Արը Ծփիների Տակ

SATURDAY SEPTEMBER 27, 7:00 P.M.



Be Healthy

Չոտ Ողջ Լինէ՛

SUNDAY SEPTEMBER 28, 7:00 P.M.



Khataballa

Խաթաբալլա

SUNDAY OCTOBER 5, 7:00 P.M.



**The
 Guards of
 Ruins**

**Աւերակների
 Պահակները**

SUNDAY OCTOBER 12, 7:00 P.M.

SIX DIFFERENT DAYS! SIX DIFFERENT PLAYS!

ONE CHANCE TO SEE EACH PLAY



GLENDALE HIGH SCHOOL AUDITORIUM

1440 E. BROADWAY, GLENDALE, CA

Mail delivery: **818.637.2191** • Tickets free delivery: **818.265.0506**

Get your tickets on line at: **itsmyseat.com** • Recorded event message: **818.487.5563**

www.bravotbilisiarmeniantheatre.com

RESERVE YOUR TICKETS TODAY Tickets: \$25, \$30, \$40, \$50, \$100

Group discounted tickets are available

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՇՈՒԿԵՆՆԵՐ Ս. ՕՇԱԿԱՆ ՎՐԴ. ՄԻՆԱՍԵԱՆ ՏԱՂԱՆԴԱԽՈՐ ԵՐԱԺԻՅՏ ԸՆԿԵՐՈՒԱԿԱՆԻՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆ

Վաստակաշատ երաժշտագետ, խմբավար եւ նուիրեալ հոգեւորական, Հոգ. Տ. Օշական Վրդ. Մինասեան, ի Տէր հանգեալ Յուլիս 26, 2008 թուին, Պոսթոնի մէջ: Ան վախճանեցաւ մէկ քանի ամիսներէ ի վեր շարունակուող ֆիզիքական անհանգստութիւններէ ետք:

Օշական Հայր Սուրբի վախճանման այս բօթը, ինչպէս իր հարազատներուն՝ նոյնպէս նաեւ իմ սիրտս կը համակէ խորին կակիծով եւ տրտմութեամբ:

Այս տխուր գոյժը առիթ կու տայ ինծի վերադառնալու ետ, շատ ետ՝ ճիշդ այն օրը, երբ պատանեակն Յուլակ Մինասեան (այս էր աւագանի անունը Օշական Հայր Սուրբին, նախքան իր ձեռնադրութիւնը) մտաւ Անթիլիասի դպրեւանքէն ներս:

Այս միակ վերջիշումը բաւական է ինքնին՝ որ յիշատակներու յորձանք մը ողողէ հոգիները իր վերապրող դասընկերներուն, եւ իմ՝ որ ապրեցանք դպրեւանքի ուսանողական այն երանելի տարիները: Իր վերապրող դասընկերներն են՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանը, Կարօ Պետրոսեանը եւ Գարեգին Քհնյ. Գասպարեանը:

Ինչ մեծանուն դէմքեր, եւ յուշեր՝ ետ չեն գար հիմա, եւ որ արցունքներ կը խլեն մեր աչքերէն:

Դեռաբողբջ պատանեակ մըն էր Յուլակ, երբ մտաւ դպրեւանքէն ներս:

Ոչինչ այնքան արտայայտիչ էր իր դէմքին վրայ՝ որքան իր նայուածքը: Ապագայ երազներով վառ իր աչքերն էին հմայիչ: Իր նայուածքը ջուրի պէս գուլալ էր եւ վճիտ՝ արցունքի մը նման:

Առաջին իսկ օրէն՝ հոգեկան ինքնամոռի կապ մը զօդեց մեզ իրարու:

- Կ'ուզեմ որ ես եւ դուն միշտ ընկերներ ըլլանք իրարու հետ, - ըլլաւ ան:

- Անշուշտ, - ըսի ես:

Ուր արդարեւ, երկարատեւ տարիներ մենք եղանք միշտ ընկերներ: Հոգիով եւ սրտով՝ եղբայրակիցներ: Ոչ ճակատագրական վերիվայրումները, ոչ աշխարհագրական հեռաւորութիւնները եւ ոչ ալ անսպասելի դժբախտ պատահարները՝ կրցան խախտել մեր

ընկերական անբեկանելի կապը:

ԱՊԱԳԱՅ ԵՐԱԺԻՅՏԸ

Յուլակ դպրեւանքի մէջ շուտով սիրուեցաւ իր դասընկերներէն եւ դասատուներէն: Իր ուսանողական առաջին օրերէն իսկ, ան ցոյց տուաւ մասնաւոր հակում մը եւ սէր՝ երաժշտութեան հանդէպ:

Դպրեւանքի չորրորդ ուսումնական տարեշրջանին՝ ան իմացած էր յանկարծ, որ Պէյրութի սինեմաներէն մէկուն մէջ ֆիլմ մը կը ցուցադրուի, մեծ երաժշտագետ ջութակահար՝ Նիքօլօ Փականինիի մասին՝ «The Magig Bow» (Մոգական Աղեղը) անուն տակ:

Յուլակ այնքան յափշտակուած էր այս երաժիշտին կեանքէն եւ անոր երաժշտական արուեստէն, որ 11 անգամներ դացեր էր դիտելու այդ ֆիլմը, եւ առանց արտօնութեան:

Դպրեւանքի տեսուչ՝ Դերենիկ Սրբազան, ներողամիտ գտնուել էր, երաժշտասէր ուսանողին այս անկարգապահ ընթացքին նկատմամբ:



«ԵՐԵՆԻԱՆ» ԵՐԳՋԱԽՈՒՄԻ ԵՒ ԽՄԲԱՎԱՐ՝ ՕՇԱԿԱՆ ՎՐԴ. ՄԻՆԱՍԵԱՆ

Թերեւս երաժշտագետ փականինի կեանքն ու գործը կարեւոր ազդեցութիւն մը թողած էին պատանի Յուլակի վրայ: Թերեւս՝ երաժշտութեան հանդէպ իր ներքին հուրը եղած էր պատճառ՝ որ ոչ երկրային դժուարութիւնները եւ ոչ ալ կեանքին պատճառած արգելքները ետ կեցնեն զինք իր հետապնդած երազէն:


Ան սորվեցաւ կեանքէն եւ կերտեց նկագրի երեք կարեւոր յատկանիշներ.

Առաջինը՝ յարատեւելն է: Ան շուտով գիտցաւ որ կեանքի մէջ յաջողութեան գլխաւոր գաղտնիք-

ներէն մին՝ յարատեւել գիտնալն է: Երկրորդը՝ չվհատիլն է: Աշխարհը մեզ յաճախ վերիվայրումներու առջեւ կը դնէ: Յաջողելու համար նախապայման է որ չվհատիլնք:

Երրորդը՝ տալ գիտնալն է եւ տալ կարենալն է: Օշական Հայր Սուրբ իր վաղ պատանեկութենէն սկսեալ մինչեւ իր հասուն տարիքը միշտ տուել է ուրիշին: Տուել է իր ընկերներուն եւ բոլոր անոնց, որոնց հարկ տեսեր է օգնել: Ան իր կեանքը նուիրած է Հայաստանեայց Եկեղեցւոյ, Հայ Ազգին եւ Հայ Մշակոյթին: Մեծագոյն տրւածութիւնն է այդ:

1950 թուին ան ստիպուեցաւ թողուլ Անթիլիասի դպրեւանքը եւ գնաց Երուսաղէմ: Այդ թուին՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարքական տեղահան էր Տ. Եղիշէ Մ. Վրդ. Տէրտէրեանի կարգադրութեամբ, Յուլակ Մինասեան, որպէս Ընծայարանի ասն, կ'ընդունուի Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանէն ներս: Յուլակ Մինասեան, Երուսաղէմի Ժա-



Օշական Վրդ. Մինասեան

Bid Request General Contractors (please make heading in reverse) Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E08-30, Module 11.2 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, October 1, 2008. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for: six single family homes (6), one 8 unit multi-family building (8), one six unit multi-family building (6), one five unit multi-family building (5), one three unit multi-family building (3) and one 2 unit multi-family building (2) for a total of thirty units. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. Two Pre-bid conferences have been scheduled for September 10, 2008 and September 17, 2008, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California. Attendance at one or the other conference is Mandatory.

ԳՐԱԿԱՆ

ԱԼԵՔՍԱՆՏՐ ՍՈԼՇԵՆԻՑԻՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ

Կենթադրեմ որ ուռու մեծ գրողին մահուան մասին տեղեակ մնաց ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, այնքան որ 20րդ դարու ընդհանուր դիմագծին եւ իրադարձութեանց վրայ ան ունեցած էր հսկայ ազդեցութիւն մը: Յատկապէս ինչ կը վերաբերի իր երկրին, նախապէս խորհրդային Միութիւն, եւ վերջին շուրջ 16-17 տարիներուն, անոր փլուզումէն ետք, Սոլժենիցին տիրող դէմք եղած է իր գրականութեամբ, եւ աճնկէ անդին, իր ունեցած վերաբերմունքին ստալինեան բռնակալութեան վերաբերեալ: Իր կեանքին եւ գրականութեան մասին հպանցիկ ակնարկ մըն է սոյն գրութիւնը, նախ մեր ընթերցողներուն ծանօթացնելու գինք, եթէ հարկ կայ, եւ ապա յարգանքի տուրք մը տալու իրեն, իբրեւ հարազատ մէկ հետեւորդը ուռու գրականութեան մեծերուն, Թոլսթոյ, Թուրկմեն, Չեխով, Տոսթոյեւսքի, Մայակովսքի, Կորքի եւ բազմաթիւ ուրիշներ:

ՄԱՀԸ ԵՒ ԹԱՂՈՒՄԸ

Ալեքսանտր Սոլժենիցին իր մահականացուն կնքեց Օգոստոս ամսուն առաջին Կիրակին, Օգոստոս 5-ին, 89 տարեկան իր հասակին մէջ: Իր թաղումը տեղի ունեցաւ Օգոստոս 6-ին, Մոսկուայի մէջ մայրաքաղաքի մարմարեայ սենեակի մէջ, ուր իր դագաղը գետեղուած էր, պաշտպանութեամբ ուռու գինուորներով, ուր ամբողջ օրը իր հայրենակիցները եկան իրենց վերջին յարգանքը տալու մեծ գրողին: Դագաղը շրջապատուած էր իր անմիջական ընտանիքի անդամներով, մինչ սպասողները, ընհանրապէս տարիքաւոր եւ չոգնած մարդիկ, փութացած էին ուռուական գիտութեանց Աքստեմիի սրահը, հակառակ տեղատարափ անձրեւին, ձեռքերին ծաղիկներ բռնած, իրենց յարգանքը մատուցելու: Մասնակիցներէն մէկը կ'ըսէր թէ «երկինքը կու լայ», իսկ ուրիշ մը «Աստուած կու լայ» կ'ըսէր: Հետաքրքրականը այն էր որ սգաւորներու շարքին կային խորհրդարանի անդամներ, նախկին «KGB»ի փոխանորդ «FSB» անձնակազմի մարդիկ, իսկ նոյնիքն Վլատիմիր Փոլժին, ներկայի վարչապետը, ձեռքերը ծաղիկներով, կու գար խոնարհելու դագաղին առջեւ: Նոյն երեկոյ, ելուցիկ ունենալով հեռատեսիլէն, Փոլժին կը թելադրէր որ Սոլժենիցինի գրքերուն աւելի մեծ ուշադրութիւն դարձուի ուռուական դպրոցներուն մէջ: Քիչ մը գարմանալի էր նաեւ Փոլժինի յայտարարութիւնը, երբ ան կը խոստովանէր որ «ամբողջ ազգին հետ, Սոլժենիցին եւս ապրեցաւ ողբերգութեան մէջ: Իր կեանքով եւ գրքերով, ան մեր ընկերութիւնը պատուաստեց ամէն տեսակի բռնակալութեանց դէմ»: Չարմանալի եւ միեւնոյն ատեն հետաքրքրական յայտարարութիւն-խոստովանութիւն մըն էր այս մէկը, մէկու մը բերնէն, որ միահեծան տէրն է այն երկրին որուն ստալինեան բռնակալութիւնը աքսորած էր Սոլժենիցինը եւ գրկած իր քաղաքացիական իրաւունքներէն:

ՍՈԼՇԵՆԻՑԻՆԻ ԿԵԱՆՔԸ

89 տարեկանին մահացող Սոլժենիցին եղած էր կարմիր բանակի սպայ եւ հակա-ստալին կեցուածքով մտածող մը: Աքսորուած էր «կուլակ» ճանչցուած ստալինեան բանտային ճամբար, ուրկէ, 1974ին աք-

սորուած էր, բնակութիւն հաստատելով Ամերիկայի Միացեալ Նահանգներու Վերմոնթ նահանգը: 1994ին կը վերադառնար իր երկիրը, Խ. Միութեան փլուզումէն ետք: Իր բազմաթիւ գրքերուն մէջ – «Օր մը Իվան Տընիսովիչի կեանքին մէջ», «Քանսէրի բանտ», մանաւանդ «Կուլակ արջիփելակո» եւ բազմաթիւ ուրիշ գործեր – արձակ, բանաստեղծութիւն, թատրոն, եւայլն, ան կը գծէր տխուր պատկերը ստալինեան բանտերուն, որուն համար ալ ինք ամբաստանուեցաւ իբրեւ «խորհրդային Միութեան բարոյականը տկարացնելու յանցանքով, եւ բանտարկուեցաւ: Հետաքրքրականը այն է որ Սոլժենիցին նաեւ քննադատեց յետ-խորհրդային փլուզման սանձարցակ ազատամտութիւնը, առանց սակայն քննադատելու Փոլժինը:


Այս բոլորը անշուշտ ներկայիս վերջ գտած են, եւ սակայն, ինք իր գրքերուն եւ գրութեանց մէջ, աշխարհին ծանօթացուցած էր Կուլակի ամբողջ ողբերգութիւնը: Իր մահը առիթ մըն է ներկայիս խորհրդածելու երկրի մը մասին, Ռուսաստանի, որ ըստ երեւոյթին կը տառապի

կորսուած խորհրդային գերագնացութեան գագաթներէն, եւ ներկայի իր պատմութեան կը նայի հակասական գագաթներով: Այսօր, յստակօրէն կը դրսեւորուի խորհրդային շրջանին հայրենատենչական, ազգայնական գագաթը, որ վերջերս դրսեւորուեցաւ Վրաստանի ողբերգութեան մէջ Ռուսաստանի դերով: Երկրէն ներս, տակաւին Ստալին կը նկատուի ամենամեծ պատմական դէմքը, Լենինի եւ Կալարինի կողքին:

Հետաքրքրական է նաեւ, եւ անշուշտ հակնալի որ հակառակ Սոլժենիցինի հանդէպ ցոյց տրուած պետական եւ ժողովրդային յարգանքին, երկրին համայնալար թերթը գրողին «Կուլակ արջիփելակո» գիրքը կը նկարագրէ «իբրեւ նախապաշարունակ լեցուն աղտ մը»:

Ինչ կը վերաբերի ժողովուրդին, յարաբերաբար տարիքաւորներն են որ կը յարգեն գրողը, մինչ երիտասարդները քաղաքականապէս անտարբեր կը թուին ըլլալ: Անոնց նոյնիսկ չեն գիտեր թէ ով է Ալեքսանտր Սոլժենիցին եւ շատ ալ հոգեւոր չէ թէ երկիրը ինչ տագնապներ անցած է: Դիտողի մը կարծիքով, երիտասարդները մտահոգ են միայն դրամով: Նոյն անձը կ'ըսէր.

«Մենք Սոլժենիցինի գրքերը կը կարդայինք գիշերները, եւ այդ



ձեւով կարող կ'ըլլայինք երեւոյթները կշռադատելու: Մեզի համար, Սոլժենիցին ծովային փարոս մըն էր, մեր ուղղութիւնը ճշդելու»:

Արդարեւ, Ալեքսանտր Սոլժենիցին փարոս մըն էր նետուած ստալինեան թանձր մշուշին վրայ, ոչ միայն իր սեփական երկիրը, Ռուսաստանը, առաջնորդելու դէպի բռնակալութեան ճիրաններէն ազատելու, այլ ինչպէս Փոլժին կը խոստովանի, բոլոր տեսակի բռնակալութեանց խաւարը լուսաւորելու: Յարգանք իր յիշատակին:

“The Friends of Armenian Arts” Proudly Presents

«Կեցցէ» **“BRAVO” TBILISI ARMENIAN THEATRE**

TBILISI'S PETROS ADAMYAN STATE ARMENIAN DRAMATIC THEATRE

Թիֆլիսի Պետրոս Ադամեանի անուան Պետական Հայկական Դրամատիկական Թատրոնի հիւրախաղերը Միացեալ Նահանգներում

Exclusive stop in **Fresno** during a National Tour

www.bravotbilisiarmeniantheatre.com

My Daughters Fiances

Աղջկա Փեսայուները

SUNDAY SEPTEMBER 14, 1:00 P.M.

By: Armen Bayanduryan

THE CAVE DWELLERS

Բարանձաի Բնակիչները

SUNDAY SEPTEMBER 14, 4:00 P.M.

By: William Saroyan

WITH ENGLISH SUBTITLES

Smile, Humor, Love, True Life Pictures

3 ACTS IN ONE DAY

IN FRESNO

Pepo

Պէպօ

SUNDAY SEPTEMBER 14, 7:00 P.M.

By: Gabriel Sundukyan

SUNDAY, SEPTEMBER 14, 2008

THE TOWER THEATRE

815 E. Olive Ave., Fresno, CA

FOR TICKETS CALL: The Tower Theatre 559.485.9050 www.towertheatrefresno.org
Levon: 559.908.8474

Patrick's Music: 769 E. Barstow, Fresno. Tel: 559.224.7287

The Friends of Armenian Arts 818.637.2191 itsmyseat.com

RESERVE YOUR TICKETS TODAY

TICKETS: \$25, \$35, \$50



ՊԱՏՄԱԿԱՆ

«ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ»Ի ՇԱՐՔԻՑ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա.Ի. ՔՉՆՅ. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ-ԲԱԼԱՅԵԱՆ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Պատանի տարիքից, լուսահոգի հայրս՝ Տ. Մեսրոպ քահանան, ինձ քաջալերում էր նուիրուել հոգեւոր ասպարէզին: Այդ պատճառով ինձ տարել էր Թիմար գաւառի Լիմ անապատի Ս. Գէորգ վանքը, հոգեւոր կրթութիւն ստանալու համար: Մեր ուսուցիչները կուսակրօն վանականներ էին, որոնք ուսեալ եւ մոլեռանդ հայրենասէրներ էին, ու աշխատում էին իրենց գիտցածը եւ գաղափարները փոխանցել: Մեր դպրանոցի տեսուչն էր Յովհաննէս Մ. Վրդ Հիւսեանը:

Տարիներ յետոյ, եթէ չպայթէր Ա.ին աշխարհամարտը, թերեւս ես վաղուց ընտրած լինէի հոգեւոր ասպարէզը: Ստանալով հոգեւոր կրթութիւն, ես աւելի ու աւելի կապուեցի Հայոց Առաքելական Ս. Եկեղեցուն, ու այնուհետ որտեղ որ եղայ, ինչ պայմաններում էլ որ ապրեցի, միշտ կապուած մնացի մեր եկեղեցուն, եւ ամէն Կիրակի, Ս. Պատարագին մասնակից եղայ որպէս դպիր ու սարկաւազ: Բնութիւնից օժտուած լինելով չափով ձայնով, մեր հոգեւոր շարականները, եւ կրօնական երգերը երգել եմ այնպէս ինչպէս սովորել եմ Ս. Գէորգ վանքում: Ի դէպի աւելորդ չեմ համարում այստեղ յիշել, որ Երեւան հասնելուց յետոյ, ինձ առաջարկ եղաւ մտնելու Երեւանի նորաստեղծ երաժշտանոցը ձայնս մշակելու համար: Միամտաբար մերժեցի եղած առաջարկները: Մեյք-Թանգեան Սրբազանը նկատի ունենալով իմ հոգեւոր ունակութիւնները, յաջող ձայնը ու նաեւ տնտեսական ծանր կացութիւնը, մի օր ասաց ինձ, «Ա՛յ տղայ, Յարութիւն, կ'ուզեմ քեզ քահանայ ձեռնադրել»: Սկզբում ես հակառակեցի: Մի օր էլ դարձաւ ու ինձ ասաց ծառայել հայ եկեղեցուն, նշանակում է ծառայել հայ ժողովրդին: Մնացել էի երկնաբանքի մէջ: Ի՞նչ անել: Թողնել աշխարհական կաննքը ու դառնալ հոգեւորական: Ներքին ձայնը քաջալերում էր ինձ, անսալ Սրբազանի առաջադրանքին, ծառայել հայ եկեղեցուն ու այդ միջոցով հայ ժողովրդին: Սրբազան հայրը իր մօտ է կանչում նաեւ կնոջս՝ Աղաւնի Տ. Մեսրոպեանին, եւ ստորագրել է տալիս մի համաձայնգիր, իմ ձեռնադրման առթիւ:

1932 թուի Հոկտեմբեր 1-ին, Շաբաթ երեկոյեան, Ղալալի Ս. Աստուածածին եկեղեցում, ձեռամբ Տ. Ներսէս Արք. Մեյք-Թանգեանի, ստացայ աւագ-սարկաւազի աստիճան, իսկ յաջորդ օրը Կիրակնորեայ Ս. պատարագի ընթացքում կատարուեց իմ քահանակայական ձեռնադրութիւնը, ձեռամբ Սրբազան հօր, եւ խարտաւիլակութեամբ Տ. Յովհաննէս Ա. ՔՉՆՅ. Հաճեանի, վերանուանուելով Յարութիւն քահանայ:

ԱՆԴՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ապաշխարութեան քառասնօրեակը պիտի անցկացնէի հայոց Առաջնորդարանում: Սակայն Սրբազան Հայրը 40 օրը իջեցրեց երկու շաբաթուայ: Ապաշխարչութեան օրերին նորընծայ քահանան պիտի լրիւ կերպով ուսանի Ս. Պատարագի եւ միւս արարողութիւնների կանոնները եւ շարականները: Այդ ինչու ինձ մեծապէս օգնեց Ստեփան ՔՉՆՅ. Տ. Ստեփանեանը, որի տուած գեկուցումից յետոյ, Սրբազան Առաջնորդի հրահանգով, Կիրակի Հոկտեմբեր 16-ին, Ղալալի Ս. Աստուածածին եկեղեցում մատուցեցի իմ անդրանիկ Ս. Պատարագը: Այդ օրը եկեղեցում մի կուռ եւ իմաստալից քարոզ խօսեց Սրբազան Հայրը: Յաջորդ Կիրակի պատարագեցի Լիլաւայի Ս. Սարգիս եկեղեցում: Իմ ձեռնադրութեան առթիւ, Թաւրիզի հաւատացեալ կանանցից՝ Տիկ. սինառաջ Մարտիրոսեանը 100 ըրիւյնուրեք Ս. Սարգիս եկեղեցուն: (Այն օրերին 100 ըրիւյն շօշափելի մի գումար էր):

ՄԵԿՆՈՒՄ ԴԵՊՒ ՈՒՐՄԻԱ

Մեյք Թանգեան Սրբազանի կարգադրութեամբ ես նշանակուեցի Ուրմիոյ շրջանի Բանադուզ գաւառի հայաբնակ գիւղերի հոգեւոր հովիւ: 1932 թուի Հոկտեմբեր 23-ին բեռնատար մեքենայով ընտանիքիս հետ ճամբայ ընկայ: Երկու օր յետոյ հասանք Սալմաստ: Քաղաքը կերպարանափոխուել էր ու բնաւ չէր նմանում 1918 թուին, մեր տեսած Սալմաստին, ուր օրհասական կռիւներ էինք մղել քիւրդ Սմկոյի դէմ, պաշտպանելով տեղացի ժողովրդին քիւրդ հրոսակների յարձակումներից եւ կողոպուտից: Շատ մեծ ցանկութիւն ունէի անցնել Հաֆթուան, ու հանդիպելու հոգեւոր հովիւ Տ. Աշոտ ՔՉՆՅ. Պողոսեանին: Քապաքը ցնցուած էր

երկրաշարժից, իսկ Տէր հայրը բացակայ էր քաղաքից: Մի քիչ հանգստանալուց յետոյ շարունակեցինք մեր ճանապարհը: «Կոչի գեադուկից» իջնելիս, հանդիպեցինք ասորական Բաղլթօ գիւղը, որտեղ ժողովուրդը մեծ սիրով ընդունեց: Աղթեցինք տեղի հողաչէն փոքրիկ եկեղեցում: Գոհունակ սրտով թողեցինք գիւղը ու Հոկտեմբեր 28-ին հասանք Ուրմիա եւ իջեանեցինք Տ. Մեսրոպ ՔՉՆՅ. Աւետիսեանի տունը: Յաջորդ օրը հասանք մեր պաշտօնատեղին հայաշատ Բարաուդ գիւղը: Գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու երիտասարդ երէցփոխ՝ Սարգիս Խաչատրեանի գլխավորութեամբ ժողովուրդը եկել էր դիմաւորելու մեզ: Տեղաւորեցինք մեզ յատկացուած բնակարանում, ու յաջոր օրն իսկ գործի անցայ: Ես նշանակուած էի Բաբաուդ, Դարաուդ եւ Սարղաուդ գիւղերի հոգեւոր հովիւ: Այդ գիւղերում ապրում էին մեծ թուով ասորիներ եւ հայեր: Հայերը մեծ մասամբ թրքախօս էին: Սկսեցի դպրոցական աշակերտների արձանագրութիւնները: Կարճ ժամանակում արձանագրուեցին 100-ից աւելի հայ մանուկներ եւ պատանիներ, որոնց մեծ մասը գալիս էր շրջակայ գիւղերից: Սկսեցի պարագմունքները: Դպրոցական աշակերտուհիներից կազմեցի մի երգչախումբ, սովորեցնելով Ս. Պատարագի, ինչպէս նաեւ ազգային երեխաները սահուն կերպով երգում էին հայերէն երգեր: Ամէն Կիրակի մատուցում էր Ս. Պատարագ, իսկ ամէն առաւօտ եւ երեկոյ կատարում էր ժամերգութիւն: Բոլորը ինձ «Տէր բաբա» էին կանչում: Աշխատում էի հայերէն լեզուն սովորեցնել բոլորին: Ամենուր մեծ եռանդ ու ոգեւորութիւն էր ստեղծուել: Ամէն օր ժողովուրդը գալիս էր եկեղեցի, եւ այցելում եկեղեցուն կից դպրոցի դասարանները: Տիրացու Սարգիսը մեծապէս օգնում էր ինձ: Նոյեմբերի 6-ին, ժամանեցին Տ. Մեսրոպ եւ Տ. Յովհաննէս քահանայ հայրերը, առաջինը Ուրմիայից, իսկ միւսը Գեարդաբադ գիւղից:

ԱՌԱՋԻՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Նոյեմբեր 7-ը ուրախութեան եւ խանդառաւութեան օր եղաւ Բաբաուդ եւ միւս հայա բնակ գիւղերի ժողովրդի համար: Այդ օրը Բաբաուդ էին եկել հարիւրաւոր հաւատացեալներ, ներկայ լինելու իրենց նորընծայ հովուի անդրա-

նիկ Պատարագին, եւ առնելու հիւր քահանայ հայրերի օրհնութիւնը: Սուրբ Պատարագին երգում էին նաեւ քահանայ հայրերը: Սպասարկում էր տիրացու՝ Գէորգ Զամալեանը: «Հայր Մեր»ից ասուաջ քարոզեց Տէր Մեսրոպ քահանան, նախ ժողովրդին փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութիւնները ապա ներկայացրեց նորընծայ քահանային եւ յոյս յայտնեց, որ բոլորը համախմբուելով հոգեւոր հովուի շուրջ, իր կոչման բարձրութեան վրայ կը պահեն մեր եկեղեցին ու դպրոցը: Տ. Մեսրոպի քարոզը խորը տպաւորութիւն թողեց հաւատացեալ ժողովրդի վրայ: Եկեղեցական արարողութիւնից յետոյ, հիւր քահանայ հայրերը եւ հասարակութեան մի մասը, հիւրընկալուեցին գիւղի բարեմիտ եւ եկեղեցասէր բնակիչներից՝ Սալադ Սարգսեանի տունը: Այդտեղ եւս եղան ճառեր եւ բարեմաղթանքներ: Ապա քահանայ հայրերի եւ իրենց հետեւորդների հետ մեկնեցինք Դարբաուդ գիւղը, ուր ժողովուրդը մեզ էր սպասում անհամբեր: Տեղուց եկեղեցու երէցփոխն էր Մովսէս անունով մի ազնիւ եւ բարեպաշտ անձնաւորութիւն: Նոյեմբեր 8-ին, պատարագեցի տեղի Ս. Գէորգ եկեղեցում, ու մեր խումբը գիշերեց Դարբաուդ գիւղում: Նոյեմբեր 9-ին մեկնեցինք Դիզաթա գիւղը, ուր նոյն օրը պատարագեցի ապա մի պատշաճ քարոզ խօսեց Ս. Յովհաննէս քահանան: Նոյեմբեր 10-ին, հասանք Բալանիչ գիւղը: Շրջանի ժողովուրդը հաւաքուած էր այդտեղ: Մի քանի գոհեր մատուցուեցին: Եկեղեցուց քիչ հեռու դրուած էին մատաղի կաթսաները: Յաւարտ Ս. Պատարագի, քարոզ խօսեց Տ. Մեսրոպ քահանան, ապա եկեղեցական թափօրը խաչով ու խաչվառով դուրս գալով եկեղեցուց, մօտեցաւ մատաղի եռացող կաթսաներին, ուր կատարուեց մատաղօրհնէքի արարողութիւն: Պահը յուզիչ էր: Այդտեղ խօսեց Տ. Յովհաննէսը, օրհնեց հայ ժողովրդին, եւ մաղթեց որ չաւէտ անասան մնայ հայոց եկեղեցին: Ապա սկսեց ժողովրդական խրախճանքը, եւ աւանդական դժօլ գուռնան, որը տեսեց մինչեւ ուշ գիշեր: Այդ գիշեր մնացինք Բալանիչ գիւղում, Գիւլագի գիւղում մէկի տանը: Յաջորդ օրը այցելեցինք Մորոսբար, Լէյրին եւ Արտիշտ գիւղերը, ուր ապրում էին մի քանի տուն հայեր: Հոգեւոր մեր այցելութիւնը լրացրած լինելով, Նոյեմ-

Շաբ.բ էջ 16

ABA Insurance Services logo and 33th Anniversary text. Includes text: Life, Health, Group Health, Disability, Long Term Care. Blue Cross of California 1975-2008 Blue Shield of California.

ԱՊԱԲՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԲՐԱԺԵՇՏ Է

ԵՐՔԵՔ ՈՒՇ ԶԷ ԿԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱԲՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205 E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ԿԱՐԵՒՐ ԺԵՍ ՌՈՒՍԱՍԱՆԻՆ

Շարունակում է 2-էն

րուծիչը կտրականապես ջարդում է այն պատկերացումները, որոնք այսօր կան Ռուսաստանում, թէ իբր Հայաստանում իշխանութիւնները ռուսամէտ են, իսկ նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը հակառուսական տրամադրութիւններ ունի: Կարծում եմ, սակայն, որ նման տարանջատումները որեւէ հիմք չունեն, որովհետեւ բոլոր փաստաթղթերը, որոնք վերաբերում են Հայաստանում ռուսական ռազմական ուժի ներկայութեանը, ստորագրուել են հենց Լեւոն Տէր-Պետրոսեանի նախագահութեան օրօք:»

Սերգէյ Մարկեղոսովը, սակայն, ուշադրութիւն հրահրեց այն հանգամանքի վրայ, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը, չլինելով իշխանութեան մաս, ներկայումս կարող է իրեն թոյլ տալ խօսել աւելի ազատ, քան նրանք, ովքեր իշխանութիւն են ներկայացնում: Այսպէս թէ այնպէս, ըստ Մարկեղոսովի, Լեւոն Տէր-Պետրոսեանի այդ յայտարարութիւնից յետոյ հնարաւոր չէ խօսել այն մասին, թէ Հայաստանում մէկը ռուսամէտ է, միւսը՝ ոչ ռուսամէտ: Այն հարցին, թէ հնարաւոր է, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի այս հարցազրոյցից յետոյ պաշտօնական Մոսկուան որոշակի փոփոխութիւններ կատարի Հայաստանի հանդէպ իր քաղաքականութեան մէջ, ռուս քաղաքագէտը պատասխանեց. «Չեմ կործում, որ կտրուկ փոփոխութիւններ կը լինեն, եւ որ վաղը կ'ասեն՝ ահա Տէր-Պետրոսեանը լաւ տղայ է, իսկ Սարգսեանը՝ վատ, բայց հնարաւոր է, որ ռուսական արտաքին քաղաքականութիւնը դառնայ աւելի բազմապլանային, հնարաւոր է, որ դրանից յետոյ ընդդիմութեան հետ էլ որոշակի յարաբերութիւններ սկսեն հաստատել»: Սերգէյ Մարկեղոսովը գտնում է, որ ընդհանրապէս՝ այդ հարցազրոյցը բաւական կարեւոր ժեստ էր Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմից՝ ուղղուած Ռուսաստանին: «Կարծում եմ՝ որոշակի մտորումներ, որ արժէ աշխատել քաղաքական ողջ ներկայակի հետ, ինչպէս անում է ԱՄՆ-ն, եւ ոչ միայն իշխանութիւնների, այնուամենայնիւ, կը լինեն», - ասաց Մարկեղոսովը:

Ինչ վերաբերում է ՀՀ իշխանութիւնների արձագանքին վրաց-

ռուսական պատերազմին, ապա ըստ Մարկեղոսովի՝ իշխանութիւններն իրենց գուսպ պահեցին, քանի որ այսօր Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքերը՝ փաստացի փակ աշխարհ, միայն երկու պատահանով դէպի դուրս՝ Վրաստանով եւ Իրանով, թոյլ չեն տալիս, որպէսզի Հայաստանը ընդգծուած ռուսամէտ յայտարարութիւն անի:

Ինչեւէ, ՌԴ-ում Լեւոն Տէր-Պետրոսեանի հարցազրոյցի հնարաւոր արձագանքների եւ քաղաքական հետեւանքների վերաբերեալ գրուեցին քննադատական հարցազրոյցներ, որտեղ ընտրութեանը անմիջապէս հասարակական ժողով հրահրեցին, որտեղ ընտրութեանը անմիջապէս հասարակական ժողով հրահրեցին, որտեղ ընտրութեանը անմիջապէս հասարակական ժողով հրահրեցին, որտեղ ընտրութեանը անմիջապէս հասարակական ժողով հրահրեցին:

Բաբառու գիւղի եկեղեցու համար գնուող գանգեր, որոնց ղողանջները - երեկոյ եւ առաւօտ - գնում ու համում էին մօտակայ գիւղերում ապրող հաւատացեալ ժողովրդին: Դպրոցի պարապմունքները կանոնաւորուեցին: Դարբառու, Սարդառու գիւղերից ամէն օր մի քանի տասնեակ հայ թրքախօս երեխաներ, ամենայն սիրով գալիս էին Բաբառու, հայոց ոսկեղնիկ լեզուն սովորելու համար: Ամենուր նշմարելի էր եռանդ ու նուիրում: Այդ երեւոյթները ինձ աւելի խթանում ու ոգեւորում էին:

ԱՆՆԱ Վ. ՅԱԿՈՒԲՅԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

«ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ»Ի ՇԱՐՔԻՑ

Շարունակում է 15-էն

բեր 12-ին, վերադարձանք Բաբառու, իսկ քահանայ հայրերը մեկնեցին իրենց պաշտօնատեղիները:

ՊԱՇՏՕՆԻ ՎՐԱՅ

Եկեղեցական եւ դպրոցական գործերը առաջ էին գնում ամենայն կանոնաւորութեամբ: սակայն եկեղեցին եւ դասարանները ներքնապէս անմիջապէս կացութեան մէջ էին: Այդ թերիները վերացնելու համար անյապաղ հասարակական ժողով հրահրեցին, որտեղ ընտրութեանը անմիջապէս հասարակական ժողով հրահրեցին, որտեղ ընտրութեանը անմիջապէս հասարակական ժողով հրահրեցին:

Բաբառու գիւղի եկեղեցու համար գնուող գանգեր, որոնց ղողանջները - երեկոյ եւ առաւօտ - գնում ու համում էին մօտակայ գիւղերում ապրող հաւատացեալ ժողովրդին: Դպրոցի պարապմունքները կանոնաւորուեցին: Դարբառու, Սարդառու գիւղերից ամէն օր մի քանի տասնեակ հայ թրքախօս երեխաներ, ամենայն սիրով գալիս էին Բաբառու, հայոց ոսկեղնիկ լեզուն սովորելու համար: Ամենուր նշմարելի էր եռանդ ու նուիրում: Այդ երեւոյթները ինձ աւելի խթանում ու ոգեւորում էին:

ԲԱՐԱՆԴՈՒՉ ԳԱԻԱՌԸ

Սոյն գաւառը արտադրում է բազմաթիւ տեսակի խաղող եւ

զանազան քաղցրահամ պտուղներ: Ձմերուկն ու սեխը գովելի են իրենց բարձր որակով: ԿՇՈՒՍԱ, սալոր, ծիրան, տանձ ու խնձոր առաւ է: Բարանդուզ գաւառն ունի 5 հայաբնակ գիւղեր: Ամենամեծ Բաբառու գիւղը, զուտ հայաբնակ, ունի 61 ընտանիք՝ 257 շունչ: Ունի եւ եկեղեցի Ս. Աստուածածին անունով: Մօտիկ՝ Սարդառու գիւղն ունի 25 տուն հայ ընտանիք, 95 շունչով, եւ իրանցի հարեւան ժողովուրդ:

Դարբառու գիւղը զուտ հայաբնակ է եւ ունի 40 ընտանիք 180 շունչ, եկեղեցի Ս. Յովհաննէս անունով: Բալանիշ գիւղն ունի 25 տուն հայ ընտանիք, որոնք հաշտ ապրում են իրենց հարեւանների հետ, ունեն եկեղեցի՝ Ս. Գէորգ անունով: Դիգաթաքա խառն ասորիների հետ, ապրում են 24 տուն հայ ընտանիք, ունեն իրենց փառաւոր եկեղեցին Ս. Սարգիս անունով: Խղրաւա, Մորոսքար, Լէյրին եւ Արգեյա գիւղերում ապրում են նաեւ հայեր: Ըստ մեր կազմած 1933 թ. շնչացուցակի՝ վերոյիշեալ գաւառում ապրում են մօտաւորապէս 205 ընտանիք, 700 շնչով: Սոյն գաւառի հայ ժողովուրդը մասամբ թրքախօս են, սակայն արդար է ասել, որ նրանք վերին աստիճանի հետեւող են իրենց նախնեաց աւանդութեանց: Հայի մաքուր եւ անբիծ հոգին վառ է սոյն գաւառի բարեպաշտ եւ հաւատացեալ ժողովրդի մէջ:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS
ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS BELLENS AND THE SAHILAH DANCERS

authentic cuisine
full hookah bar
VIP membership
full cocktail bar
live belly dancing
live music and DJ

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

626.449.4599
162 N. SIERRA MADRE BLVD.
PASADENA, CA 91107

ՀՈԳԵԼՈՅՍ Տ. ՕՇԱԿԱՆ ՎՐԴ. ՄԻՆԱՍԵԱՆ

Շարունակում է 6-էն

բնակիչները կու գան ունկնդրել Օշական Հայր Սուրբի վարած հաերգները:

Փոքրիկ այս հայ գաղթօճախներու հայ բնակիչները կը խանդավառուին Օշական Հայր Սուրբի ներկայացուցած համերգներէն:

Ամերիկահայ երաժիշտներու շրթներէն հայ երգն է որ կը հնչէ: Շուրջ երկու տարի տեւող ժողովուրդի այս խանդավառութիւնը, տարաբախտաբար կ'ընդհատուի սակայն 1955 թուի ամբարն, որովհետեւ Օշական Հայր Սուրբ արկածահար կ'ըլլայ եւ ֆիզիքապէս կ'անդամալուծուի:

ԱՐԿԱԾԸ ԵՒ ԱՆՈՐ ԿԱՊՈՒԱԾ ՍՐՏԱՌՈՒՉ ԴՐՈՒԱԳՆԵՐԸ

Օգոստոս ամսուն մէջ էր եւ օրն էր Կիրակի: Լօրէնսի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենար Ս. Պատարագ: Պատարագիչը ինքն էր՝ Օշական Հայր Սուրբը:

Պատարագի ընթացքին, անօրինակ կերպով կը քրտնի ան: Կը մատնուի անմեկնաբանելի տագնապի մը: Չի կրնար քարոզել: Հաւատացեալ ժողովուրդի առջեւ կը կենայ խորին վիշտով եւ կ'ըսէ հետեւեալը.

- Միտի չաւատացեալներ, ներեցէք ինծի, այսօր ես ի վիճակի չեմ քարոզելու ձեզի: Գալ շաբաթ՝ եթէ Տէրը կամի:

Նոյն Կիրակի օրը, յաւարտ Ս. Պատարագի, եկեղեցւոյ մարմիններու կողմէ կազմակերպուած էր դաշտահանդէս՝ Լօրէնսի զբօսայգիներէն մէկուն մէջ (picnic):

Հոն կ'երթայ նաեւ Օշական Հայր Սուրբը: Փիքնիքի կու գան նաեւ իր ընկերներէն Յովհաննէսը եւ Վարդանը: Կը մատուցուին հաշկական ճաշեր: Նուազախումբ ունին: Կը ներկայացուին հին հայկական պարի եղանակներ:

Օշական Հայր Սուրբի ընկերներուն կողմէ առաջարկ կ'ըլլայ որ ծով երթան լողալու: Կը համաձայնին, որովհետեւ տաք է եղանակը:

Մեկնելէ առաջ սակայն, Հայր Օշականի մօտիկ՝ հայ ընտանիքի մը փոքրիկ աղջնակը (հագիւ վեց տարու), կու գայ կանգնեցնելու Օշական Հայր Սուրբը եւ կը հարցնէ - Where are you going Hayr Sourp - (Ո՛ւր կ'երթաս Հայր Սուրբ):

Հայր Օշական կ'ըսէ, որ իր ընկերներով ծով կը մեկնի լողալու: Փոքրիկ աղջնակը թափանձազին կը խնդրէ Հայր Սուրբէն որ չերթայ: Կը փաթթուի անոր ոտքերուն եւ կը պնդէ որ չերթայ ան: Երբ կը մերժուի, աղջնակը կ'ըսէ այս անգամ հետեւեալը. «Hayr Sourp, I beg of you to not go! Don't go, if you love me! (Հայր Սուրբ, եթէ գիտ կը սիրես, մի՛ երթար... կը խնդրեմ, մի՛ երթար):

Օշական Հայր Սուրբ կը գոռէ երեխան՝ զինք հանդարտեցնելու մտօք, բայց ընթացք չի տար երեխայի խնդրանքին: Կը մեկնի ծով, իր ընկերներուն հետ:

Հայր Օշական դպրեվանքի իր երկու ընկերներուն եւ երիտասարդ հոգաբարձութեան անդամի մը հետ կը հասնին ծովափ: Մովը ալեկոծ է:

Օշական Հայր Սուրբ ծով մտնելէ առաջ, հետեւեալը կ'ըսէ երիտասարդ հոգաբարձու ընկերոջը.

- Տափատիս գրպանին մէջ 51 տոլար դրամ կայ, եթէ ինծի բան մը պատահի, այդ դրամը դուն առ եւ եկեղեցիին նուէր տուր:

- Don't talk foolish, Hayr Sourp,

only be careful (խենթ մի խօսիր, Հայր Սուրբ, միայն զգոյշ եղիր):

Տարօրինակ են կեանքին պատճառած անակնկալները:

Օշական Հայր Սուրբ ծով կը մտնէ եւ դուրս չի գար: Երեք ընկերներ ծովափէն դուրս կը բերեն զինք՝ գրեթէ կիսամեռ վիճակի մէջ: Կը յաջողին թոքերէն պարպել իր կուլ տուած ջուրերը:

Բարեբախտաբար, կենդանի է ան: Բայց՝ անդամալուծ:

Պատահածը հետեւեալն է. ծովուն վիթխարի մէկ ալիքը, Հայր Սուրբը իր ծալքերուն մէջ առած է եւ անոր գլուխը մխրձած ծովու լոյծ աւազներուն մէջ: Այնքան ուժգին եղած է այդ մխրձումը, որ Հայր Սուրբին ողնաշարը (spinal cord) վիզէն վար ճաքած է:

Ուղեղէն դէպի մարմնի չորս անդամներուն (երկու ձեռքերուն եւ երկու ոտքերուն) տանող ջիղերը վնասուած են եւ անդամալուծուած է Հայր Սուրբը (Quadriplegic paralysis):

Հիւանդանոց տարուած էր ան: Մասնագէտ բոլոր բժիշկները չէին կրցած դարմանել պատահած դժբախտութիւնը:

ՆԱԽԱԶԳԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Անթիլեասի դպրեվանքին մէջ մեր ուսանողական տարիներուն՝ մենք յաճախ ծով կը մտնէինք լողալու: Այդ տարիներուն Դպրեվանքի (Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատկան) կալուածը կ'երկարէր մինչեւ ծովափ:

Օշական Հայր Սուրբ (Յովակ) եւ ես (Արամ) լաւ լողորդներ էինք: Երբ կը խօսէինք ծովի մասին, Օշական Հայր Սուրբ սա խօսքը կը կրկնէր միշտ.

- Կեանքի մէջ միակ բանը, որմէ ես կը վախնամ, ծո՛վն է:

Այս իր առաջին նախազգացութիւնն էր:

Իր արկածի այդ Կիրակի օրը՝ պատարագի ընթացքին իր կրած սրտնեղութիւնն ու տագնապը ուրիշ բան չէր, եթէ ոչ՝ իր երկրորդ նախազգացութիւնը:

Նոյն արկածի օրը, դատաւհանգէսի ատեն, այն փոքրիկ աղջնակին կրկնուող թախանձանքները իրեն ուղղուած՝ որ ծով չերթայ, երրորդ կարեւորագոյն նախազգացութիւնն էր:

Ու վերջապէս, նոյն օրը, ծով մտնելէ առաջ, հոգաբարձութեան երիտասարդ անդամին կատարած իր ուշադրաւ այն արտայայտութիւնը՝ որ եթէ իրեն բան մը պատահի, իր գրպանը գտնուող 51 տոլարը տրուի եկեղեցիին: Ու այս՝ իր վերջին եւ չորրորդ նախազգացութիւնն էր:

Կարեւոր նկատեցինք լիշեւ այս նախազգացութիւնները, որովհետեւ կեանքի մէջ ամէն մարդ կ'ունենայ յաճախ նախազգացութիւններ:

Այդ նախազգացութիւնները՝ Աստուծոյ կողմէ մեզի ընծայուած ազդարարութիւններ են, որոնց պէտք է անասնք, եւ արթուն մնանք՝ խուսափելու համար վերահաս ամէն կարգի վտանգներէ եւ արկածներէ:

ԱՐԻՈՒԹԻՒՆԸ ՀՈԳԻԻ

Որքան որ արագ եւ ծանր եղած էր հարուածը՝ Օշական Հայր Սուրբի կրած արկածին, այնքան ալ արագ եղաւ իր սթափումը: Ծիշը է որ ան այլեւս իր ձեռքերը և ոտքերը գործակէ չէր կրնար եւ ձեռնարկարգով է որ պիտի երթար ուր որ կամենար:

Ֆիզիքապէս այս դժուարութեան դիմաց սկայն զօրացաւ իր

հոգին, կամքը՝ ապրելու եւ յաղթահարելու բոլոր դժուարութեանց: Գնաց համալսարան, շարունակեց իր ուսումը: Մէկ քանի տարիներ տուայտեցաւ՝ բայց յաջողեցաւ:

Դոկտորիայի (Ph.D.) բարձրագոյն տիտղոսին եւ վկայականին տիրացաւ Աստուածաբանութեան եւ երաժշտութեան մէջ: Իր աննկուն կամքով դիմակալեց իր ֆիզիքական բոլոր անկարողութեանց:

Պոսթոնի Ս. Երրորդութիւն մայր եկեղեցւոյ դպրաց դասի ղեկավարութիւնը ստանձնեց:

Հիմնեց «Երեւան» երգչախումբը: Տարին երկու անգամ համերգներ կը ներաչացնէր, գարնանային համերգ՝ Մայիսի մէջ, եւ Մինդեան համերգ՝ Դեկտեմբեր ամսուն:

Պոսթոնի եւ շրջակայքի հայութիւնը խուռներամ ներկայ կ'ըլլար այս համերգներուն: Ան շուրջ 40 տարիներ հայ երաժշտութիւնը տարածեց ու սփռեց ամերիկահայ նոր սերունդի հոգիներուն մէջ: Նաեւ հայ երգի ունկնդրման վայելքը ընծայեց ամերիկահայութեան:

Ան դարձաւ անխոնջ մշակը հայ մշակոյթին:

Ես որ ամէն տարի կ'երթայի Պոսթոն՝ ներկայ ըլլալու իր համերգներուն, սքանչանալով հանդերձ իր կամքին եւ նուիրումին վրայ, հոգեպէս կը տառապէի տեսնելով իր ֆիզիքական եւ այլ կարգի անպատու դժուարութիւնները: Իր ունեցած բազում դժուարութեանց ի տես՝ ես կ'ապշշի յաճախ, իր անվեհեր կամքին ի տես:

Ի վերջոյ կը համոզուէի, որ Հաւատքն էր այն ուժը, որ Հնորհեր էր իրեն կամքը՝ տոկալու: Հաւատքը՝ իր անձին հանդէպ եւ հաւատքը՝ առ Աստուած:

Կարեւոր բախտաւորութիւն մըն էր, որ Օշական Հայր Սուրբ, որպէս հովանի եւ հոգատար՝ ունէր դեռ իր պաշտեցեալ մայրը, տիրամայր Սիրվարդ Մինասեանը: Ունէր նաեւ նուիրեալ իր սիրելի քոյրը՝ Ալիս Փալեանճեանը, եւ նոյնքան նուիրեալ իր զարմուհին՝ Նէնսի Մոսկոֆեանը:

Այս պատուական կիրները եղան

միշտ իր պահապան հրեշտակները: Առանց այս հարազատ հոգիներու ընծայած ազնուական հոգատարութեան՝ Օշական Հայր Սուրբի ամէնօրեայ կեանքը աներեւակայ լիօրէն պիտի ըլլար դժուարին եւ լի անպատեհութիւններով:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հոգելոյս Օշական Հայր Սուրբի մասին իմ պատրաստած եղբայրական այս գիրը կը փափաքիմ աւարտել, վերադառնալով դարձեալ ծովուն: Ոչ այն ծովուն՝ որ զինք անդամալուծեց, այլ՝ «կեանքի ծովուն»: Ա՛յն «կեանքի ծովուն», որուն վրայ ան թիափարեց առանց վտանգի եւ համբերութեամբ, մինչեւ իր խոր ծերութիւնը եւ վախճանումը:

«Կեանքի ծովուն» այս խորհուրդը՝ մեզի աւանդողը եղած է Ս. Մեսրոպ Մաշտոց՝ Հայ ժողովուրդի եռամեծար սուրբը, մեր այբուբենի ստեղծիչ մեծագոյն հանճարը:

Ս. Մեսրոպ Մաշտոց, նաեւ բանատեղծ էր: Ան գրած էր շարք մը շարականներ, ուր յատակ է ներկայութիւնը՝ բանաստեղծութեան:

Ահաւասիկ երեք տողեր, վերջուած՝ իր «կեանքի ծովուն» մասին գրած ապաշխարհութեան շարականն է.

«Մով կեցեալոյս համապազ ինձ այլեկոծէ,

Մրրկեալ այիք բշմամին ինձ յարուցանէ,

Նաւապետ բարի, լեր անձին իմոյապաւէն...»:

(«Կեանքի ծովուն» մասին գրած ապաշխարհութեան շարականն է.)

Թշմամին մրրկեալ այիքներ կը յարուցանէ ինձի դէմ,

Նաւապետ բարի, ապաւէն եղիր իմ անձին...»:

«Նաւապետ բարին» Աստուած ինքն է, որ «ապաւէն» եղաւ միշտ՝ Օշական Հայր Սուրբին: Աստուած ծովու յարուցած այիքներէն միշտ պաշտպանեց Օշական Հայր Սուրբը՝ որպէսզի ան կեանքի մէջ միշտ իրագործէ իր բոլոր բարի նպատակները եւ ի վերջոյ հասնի մեր Տիրոջ՝ Երկնաւր Արքայութեան:

ԲԱՑՈՒԱԾ Է
Հիպնոսաբուժութեան կեդրոն
ղեկավարութեամբ՝
Փոքրատու բժիշկ Արթին Սաղրեանի
Փասատիմայի մէջ
Ամէն օր՝
առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ կ.ե. ժամը
3:00
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E
Pasadena CA 91104
Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ
PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ մնջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

ՄԱՐԶԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ԶԱՅԱՍՏԱՆ - ԹՈՒՐԹԻԱ՝ 2:1

Ֆուլթայլի Հայաստանի երիտասարդական հաւաքականն «Հրազդան» մարզադաշտում 2:1 հաշուով կամային յաղթանակ տօնեց Թուրքիայի երիտասարդական հաւաքականի նկատմամբ: 15 հազար հանդիսականների աջակցութեան ներքոյ հայ երիտասարդներն իրենց լաւագոյն հանդիպումներից մէկը անցկացրին, եթէ ոչ լաւագոյնը:



Առաջին խաղակէտում հայ ֆուլթայլիստները ստեղծելով մի քանի ռեալ գոլային պահեր, այդպէս էլ չկարողացան բացել հաշիւը: Իսկ ահա Թուրքերը, 66-րդ րոպէին օգտուելով մեր թիմի պաշտպանների կոպիտ սխալից առաջ անցան հաշուի մէջ: Աչքի ընկաւ Դուրակը:

Թուրք էր ընդունած գոլից յետոյ վարուժան Սուքրասյանի սաները կորցրին յաղթելու հնարաւորութիւնը, սակայն հայ ֆուլթայլիստներին խաղալերջում յաջողութեց կատարել անհնարինը: Նախ, 89-րդ րոպէին տուգանայինի խաղարկումից յետոյ Կառլեն Մկրտչեանը հաւասարացրեց հաշիւը: Ստանալով հոգեբանական առաւելութիւն, Հայաստանի ընտրանին նետուեց առաջ, եւ մրցավարի աւելացրած ժամանակահատուածում Հենրիխ Մխիթարեանը 2-րդ անգամ գրաւեց Թուրքերի դարպասը: Այս գոլից յետոյ «Հրազդան» մարզադաշտ եկած հազարաւոր ֆուլթայլասէրները յայտնուեցին ցնծութեան մէջ եւ հանդիպման աւարտից յետոյ «Հայաստան» վանկարկելով սկսեցին տօնել յաղթանակը մարզադաշտի մերձակայ փողոցներում:



Այս յաղթանակից յետոյ Հայաստանի երիտասարդական հաւաքականը «Եւրօ-2009»-ի ընտրական 2-րդ խմբում 10 միաւորով շարունակում է զբաղեցնել 4-րդ հորիզոնականը:

ԶԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱՏ ԴԱՐՁԵԱԼ ԱՌԱՋՏԱՐ

Ֆուլթայլի Հայաստանի առաջնութեան 17-րդ տուրում Երեւանի «Արարատ»ը, 1:0 հաշուով առաւելութեան հասնելով «Բանանց»ի նկատմամբ, կրկին դուրս եկաւ առաջին հորիզոնականը: «Արարատ»ի կազմում յաղթանակ գնդակը 61-րդ րոպէին խփեց պրագիլացի Ջեֆերսոնը:



Մինչ այս մրցաշարային աղիւսակը գլխաւորող «Միկա»ն, Կապանում գիջելով տեղի «Գանձասար»ին, նահանջեց 2-րդ տեղ: «Գանձասար»ը շնորհիւ 79-րդ րոպէին Ալեքսանդր Պետրոսեանի խփած գոլի 1:0 հաշուով առաւելութեան հասաւ «Միկայ»ի նկատմամբ: Յաղթելով այս խաղում Սամուէլ Պետրոսեանի թիմը ամրապնդեց դիրքերը 4-րդ հորիզոնականում եւ եռեակ մտնելու այս թիմի հնարաւորութիւնները աւելի մեծացան:

Անակնկալ գրանցուեց «Ուլիս» - «Կիլիկիա» խաղում, որը աւարտուեց 1:1 հաշուով: «Կիլիկիա»ն Էդուարդ Մարկարովի գլխաւորութեամբ արդէն մէկ անգամ չէ, որ կարողացել է միաւորներ խլել կարգով իրենից բարձր թիմերի հետ պայքարում:

«Փիւնիկ»ը սեփական հարկի տակ հիւրընկալելով «Շիրակ»ին յաղթեց 2-1 հաշուով:

17-րդ տուրից յետոյ մրցաշարային աղիւսակը ունի այսպիսի տեսք.

	Խաղ	Յաղ.	Հաւ.	Պարտ.	Կօլ	Կէտ
«Արարատ» Երեւան	17	11	3	3	27-13	36
«Միկա» Աշտարակ	17	10	4	3	27-13	34
«Փիւնիկ» Երեւան	17	10	4	3	23-10	34
«Բանանց» Երեւան	17	7	3	7	19-16	24
«Գանձասար» Կապան	17	9	3	5	25-16	30
«Ուլիս» Երեւան	17	4	2	11	12-22	14
«Շիրակ» Գիւմրի	17	3	2	12	9-25	11
«Կիլիկիա» Երեւան	17	2	3	12	13-40	9

ԱՊԱՔԻՆՈՒՄ

Պրն. Գէորգ Գալուստեան ինքնաշարժի մեծ արկածէ ազատուելուն ուրախ առթիւ, շնորհակալութիւն կը յայտնէ անոնց որոնք զինք այցելեցին կամ հեռախօսներով ապաքինում մաղթեցին իրեն եւ իր տիկնոջ Տիկ. Լուսին Գալուստեանին: Առ այդ Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Լուսին Գալուստեաններ \$100 կը նուիրեն Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուց եւ \$100 «Մասիս» շաբաթաթերթին:

ՓԵՔԻՆԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ԲՈՆՑԿԱՍԱՐՏԻԿ ԶՐԱԶԻԿ ԶԱՄԱՆԵԱՆ ՎԱՍՏԱԿԵՑ ԶԱՅԱՍՏԱՆԻ 6-ՐԴ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼԸ

«Օլիմպիադա - 2008» - ը աւարտուած է: Հայ մարզիկները Փեքինում ընթացող խաղերում վաստակեցին միանգամից 6 պրոնզէ մետալ:



Վերջինը պայքարը թողեց 60 կգ քաշային բռնցքամարտիկ Հրաչիկ Զաւարեանը, որը, դուրս գալով կիսանգրափակիչ, արդէն իսկ պրոնզէ մետալ էր ապահովել: Կիսանգրափակիչում Զաւարեանի մրցակիցը 2004թ. օլիմպիական խաղերի ակոյցեան Ալեքսէյ Տիշչենկոն էր: Բռնցքեւորները մրցամարտից առաջ բացառապէս ֆաւորիտ էին համարում ռուս մարզիկին, սակայն հանդիպումը սկսուեց հաւասար պայքարում եւ որոշ ժամանակ Հրաչիկը ոչինչով չէր գիջում հակառակորդին: Հանդիպման ելքը վճուուեց 3-րդ ռաունդում, երբ Զաւարեանը 4:5 հաշուով գիջելիս մրցավարից հերթական գոլշացումը ստացաւ, որի համար Տիշչենկոյին լրացուցիչ 2 միաւոր գումարեցին: Ունենալով շօշափելի առաւելութիւն՝ ռուս բռնցքամարտիկը մրցամարտը հասցրեց յաղթական աւարտի՝ առաւելութեան հասնելով 10:5 հաշուով:

Տիշչենկոն դուրս եկաւ եզրափակիչ, որտեղ կը մրցի Քուպայի ներկայացուցիչ Եորդենիս Ուզասի հետ, որը կիսանգրափակիչում առաւելութեան հասաւ Ֆրանսան ներկայացնող Դաուդա Սոու նկատմամբ:

54 կգ քաշայինների պայքարում եզրափակիչում հանդէս գալու իրաւունք ստացաւ Եանկիլեւ Լեոնը, որը կիսանգրափակիչում 7:2 հաշուով առաւելութեան հասաւ Բրունօ Ժուլէի (Մաուրիտիուս) նկատմամբ: Եզրափակիչում քուպացին կը հանդիպի Մոնղոլիան ներկայացնող Բադար - Ուզան Էնիբատի հետ, որը կիսանգրափակիչում պարտութեան մատնեց ռումինացի Վիաչեսլավ Գոյանին:

Աւարտուեցին 29-րդ օլիմպիական խաղերը: Խաղերի մեկնարկից արդէն իսկ ակնյայտ էր, որ Չինաստանի օլիմպիական հաւաքականը «Օլիմպիադա-2008»-ում ոսկէ մետալների քանակով մրցակցութիւնից դուրս է: Այդպէս էլ եղաւ. չինացիները Փեքինում կայացած խաղերում միանգամից 51 ոսկէ մետալի արժանացան՝ վաստահորէն գրաւելով առաջին հորիզոնականը:



Չինացիներին կարող էին շրջանցել միայն ամերիկացիները, որոնք սակայն չղիմացան սուր մրցակցութեանը՝ 36 ոսկիով գրաւելով 2-րդ հորիզոնականը: Այս երկու հաւաքականները միասին 210 մետալի արժանացան, որից 110-ը բաժին հասաւ ԱՄՆ-ին:

Լաւագոյն եռեակը եզրափակեց Ռուսաստանը, որը արժանացաւ 72 (23 ոսկէ) մետալի: Ինչպէս եւ սպասուում էր ռուսները կարողացան դուրս գալ 3-րդ հորիզոնական, սակայն Ռուսաստանի օլիմպիական հաւաքականը չկարողացաւ կատարել իր առջեւ դրուած առաջադրանքը եւ Փեքինից հեռանալ առնուազն 80 մետալով: Առաջնութեան ամենամեծ անակնկալը մատուցեցին Մեծ Բրիտանիան ներկայացնող մարզիկները, որոնք 47 (19 ոսկէ) մետալով գրաւեցին 4-րդ հորիզոնականը: Բրիտանացիները նախքան խաղերի մեկնարկը իրենց առջեւ խնդիր էին դրել զբաղեցնել 7-րդ հորիզոնականը, սակայն կարողացան գերազանցել Գերմանիայի եւ Աւստրալիայի նման հօգը հաւաքականներին: Սպասելիքները գերազանցեց Ուկրաինան, որը այս խաղերում ակնկալում էր ունենալ 14-15 մետալ, բայց ուկրաինացի մարզիկները միանգամից 27 (7 ոսկէ) մեդալ նուաճեցին: Նախկին ԽՍՀՄ հանրապետութիւններից յաջորդը Պելաուսն էր, որը 19 (4 ոսկէ) մետալի արժանացաւ՝ գրաւելով 16-րդ հորիզոնականը: Վրաստանը 3 ոսկէ եւ 3 արծաթէ մետալներով հանգրուանեց 27-րդ հորիզոնականում: Ատրպէյճանի օլիմպիական հաւաքականը 7 (1 ոսկէ) մետալի արժանացաւ եւ հանգրուանեց 39-րդ հորիզոնականում: Հայաստանը իր 6 պրոնզէ մետալներով ի վերջոյ գրաւեց 79-րդ հորիզոնականը: Իսկ ահա նուաճած մետալների քանակով հայ մարզիկները աշխարհում կիսում են 30-35-րդ հորիզոնականները:

«Փեքին-2008»-ում ընդհանուր առմամբ խաղարկուեց 958 մետալ: Մեդալ նուաճել յաջողուեց 87 երկրների ներկայացուցիչների:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA

ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՕԳՆԵՆՔ ԱՌԵԻԱՆԳՈՒԱԾ ԵՐԵՔ ՓՈՔՐԵՐՈՒՄ

Շարունակում է 1-ին

հետ, նոյնպես ստանալ էր իրեն հետ ամուսնալուծում անհետ Տիկ. Քրիսթին ժանապարտինին, ըսելով թե կ'ուզէր պտոյտի տանիլ իր որդին Կրեկը: Ճօն, առեւանգելով իր միակ որդին Կրեկ Սիլվան (9), փախուստ (°) կու տայ երկրէն: Իր եւ Կրեկի հետքը կորստուած էր դաւադրաբար:

Ոճրագործ երկու եղբայրները, Ժորժ Սիլվան եւ Ճօն Սիլվան, երկուքն ալ հաւաստիացուցած էին իրենց զաւակներու մայրերուն, որ Պիկ Պէր արձակուրդի կ'ուզէին տանիլ իրենց զաւակները:

Առեւանգումէն ասդին, եղբայրներ Ժորժ Սիլվան եւ Ճօն Սիլվան, կորսնցուցած են իրենց հետքերը, վտանգելով երեք փոքրերու կեանքը, եւ անմխիթար հոգեվիճակի մատնելով փոքրերուն մայրերը, ինչպէս պիտի վկայէր մեծ մայրը՝ Ռօզալին Մկրեան, մեզի հետ ունեցած իր հեռաձայնային խօսակցութեան ընթացքին:

Համաձայն ոստիկանական լրատուական աղբիւրներու, այս առեւանգումները լաւապէս ծրագրուած էին մեղապարտ ընտանիքին կողմէ:

Ուեստչէսթ կը գտնուէր յանցագործ Սիլվաներու ընտանեկան հաւաքական տունը, ուր կը բնակէին երկու եղբայրները, Ժորժ Սիլվան եւ Ճօն Սիլվան իրենց ծնողներուն՝ Տէր եւ Տիկ. Ալեքս եւ Լիւսի Սիլվաներու հետ: Համաձայն ոստիկանական հաղորդագրութիւններուն, անոնք ամիսներէ իվեր չէին վճարած իրեն բնակած տան վարձքը եւ հսկայ գումարներ իւրացուցած էին իրենց ծանօթ-բարեկամներէն, հայրենակիցներէն: Երկու յանցագործ եղբայրները իրենց հետքերը լրիւ անհետացնելու համար՝ փճացուցած էին իրենց բժիշկային եւ տան հեռաձայնները: Լոս Անճելոսի ոստիկան սպայ Ռիչըրտ Մոզալեր դիտել տուած էր, թէ Ժորժ եւ Ժան Սիլվան, անոնց ծնողներուն՝ Ալեքս եւ Լիւսի Սիլվաներու, եւ երեք երեխաներու անյայտացումը ծրագրուած էր: Այսօր յայտնի չէ, թէ ու՞ր կրնան թաղանթուած ըլլալ անոնք: Հո՞ս են, թէ ճամբորդած են այլ երկիր: Կ'իմանանք, թէ անոնց ծնողները, Լիւսին եւ ամուսինը Ալեքս, կը գտնուին հիւսիսային Սուրիա (Հալէպ):

Հայ եւ օտար հասարակութիւնները խստիւ դատապարտած էին առեւանգումները եւ կը պահանջէին շուտով յայտնաբերել ոճրագործները: Ոստիկանութիւնը դիմած էր հանրութեան: Ան ինդրած

էր բոլորէն, որ որեւէ տեղեկութիւն ունենալու պարագային, բարի ըլլան հեռաձայնելու հետեւեալ հասցէներուն, LAPD Pacific Division, Detective Blanca Lopez 310-482-6380 թիւին, կամ՝ Lt. Richard Mosler-ին՝ 310-482-6313- թիւով: Հաստատած էին նաեւ ցանցակապ, հասցէն՝ <http://silahboys.blogspot.com>: Անգամ 25.000 Տոլար խոստացուած է անոնց, որոնք կրնային յայտնաբերել յանցագործներուն թաքստոցը:

Հակառակ վերոյիշեալ բոլոր միջոցառումներուն, տակաւին անգտանելի կը մնան Սիլվանները:

Մեզի համար ամէնօրեայ եւ մնայուն ցաւ է հաստատել, որ մինչեւ օրս դոյզն յոյս ներշնչող ոչ մէկ նորութիւն յատնաբերուած է առեւանգուած եւ մայրական անմիջական հոգածութեան կարօտ մանուկներու կապակցութեամբ: Մինչ անոնց տանջահար մայրերն ու բոլոր սիրատուները հարազատները, օրն ի բուն կ'սպասեն իրենց սրտահատորներուն յայտնաբերումին:

Թուականէս քանի մը օր առաջ, Օգոստոս ամսուան մէջ, մայրական այդ խորը տառապանքին հարազատ թարգմանը հանդիսացաւ 12 տարեկան Ալեքս Սիլվանի եւ 8 տարեկան Զաւէն Սիլվանի մեծ մայրը Ռօզալին Մկրեան: Առեւանգուած երեք երեխաներու՝ դպրոցէ գրկուած ըլլալու հանգամանքը նախատեսելով, ափսոսանքով լեցուն սրտով կ'ըսէր տանջահար մեծ մայրը մեր այս սիւնակը գրելէն քանի մը օր առաջ, Օգոստոսի 22-ին իրարու հետ ունեցած մեր հեռաձայնային հաղորդակցութեան ընթացքին. «Ի՛նչ սրտով կրնանք դիմաւորել մեր կրթական վերամուտը»: Ինչպէս ընդունիլ, որ մեր թոռները պիտի գրկուին դպրոցէ: Հրօ՛շք մը պէտք էր, որ այդ երեք երեխաները վերադառնային իրենց տունները: Իրենց մայրերուն գորովագութ գիրկերը: Վերադառնալին իրենց դպրոցները»:

Անշուշտ, այս մասին կրնանք անդրադառնալ տակաւին: Տայ Աստուած, որ նուազագոյն չարիքով իր աւարտին հասնի այս հակամարդկային, այլապէս տիտուր եղելութիւնը, որմէ յաղթական դուրս գայ մեր առեւանգուած հոգեհատորները:

Ազգովին պիտի օգնենք առեւանգուած երեք փոքրերուն յայտնաբերման աշխատանքներուն: Տոյց պիտի տանք, թէ «Կրակը ինկած տեղը չէ որ կ'այլէ միայն, նաեւ կ'այլէ բոլորին սրտերը, երբ հասցուած չարիքը, հայօրէն, ունի ընդհանրական բնոյթ»:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՀԵՌՈՒՍՏՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
 CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ
 (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱՔՐԵՍԵՆԹԱ)
 GLOABCAST SATELLITE
 ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԱՆ 10:00-11:00

ՔԱՉՆԱՉԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
 Ամէն Կիրակի երեկոյեան
 ժամը 10:00-ից 12:30
 Կլէնտէյլի 280-րդ կայանից

Հայ Թելեժամը Կը Վերադառնայ
18ը Ալիքի Վրայ
 Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը
Շարաքը 7 օր անվճար
 Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յանելեալ ալիքներ
 Յանելեալ տեղեկութիւններու համար դիմել
 Հայկական Թելեժամ (818) 982-2400

The Armenian Teletime
Is Back On Channel 18
 Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day
7 Days Per Week, Free
 No Subscription Fee - Plus 40 Additional Channels
 For info call The Armenian Channel (818) 982-2400

ՈՒՇԱԴՐՈՒԹԻԻՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻԻՆ...

Մեծ Ժողովրդականութիւն Վայելող
Կլէնտէյլի AMGA 280-րդ Ալիքը
Այժմ Կը Սփռուի
GlobeCast
Արբանեակային Հեռատեսիլով
Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի
Ամբողջ Տարածքին

Դուք Կրնաք Դիտել
 Հայաստանեան Լուրեր - Քաղաքական Վերլուծութիւններ
 Երաժշտական Հաղորդումներ - Եւայլն

Մանրամասնութիւններու Համար
Հեռաձայնել 818.547.9696

ԱՍՈՒՍՆԱՅԵԱԼՔ
ՅԱԿՈՒԹԻԹԻՆՃԵԱՆ ԸՆԴ ԱՆԻԹԱ ԺԵՐԷՅԵԱՆ
 Շաբաթ, Օգոստոս 23, 2008

ՅԱԿՈՒԹԻԹԻՆՃԵԱՆ եւ **ԱՆԻԹԱ ԺԵՐԷՅԵԱՆ**ի պակասագրութեան ուրախ առթիւ մեր ջերմ շնորհաւորութիւնները ամուսնացեալ զոյգին, անոնց ընտանեկան պարագաներուն, ի մասնաւորի Տէր եւ Տիկ. Ընկ. Տիրան եւ Մարգրիտ ձէրէճեաններուն:

«ՄԱՍԻՍ»

ՇՆՈՐԱԻՈՐԱՆՔ

Տէր եւ Տիկ. Սեւակ եւ Անժել (Angel) Գիրգորեաններու մանչ զաւակով մը բախտաւորուելուն ուրախ առթիւ, որ անուանած են Կարօ, մեր ջերմ շնորհաւորութիւնները նորածին ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ընկեր Կարօ եւ Սեղա Գիրգորեաններուն:

«ՄԱՍԻՍ»

Չեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շարաքաթերթին
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

CO-SPONSOR

City of Glendale

MAJOR SPONSOR

DIAGEO


JOHNNIE WALKER



SPONSORS



Pacific Western Bank



Wells Fargo Bank

Glendale Medical Pharmacy



MEDIA SPONSORS



MASSIS WEEKLY

Armenian Observer

Kach Nazar

Nor Hayastan

ARMENIAN INDEPENDENCE DAY

FESTIVAL

SUNDAY, SEPTEMBER 21 2008

VERDUGO PARK, GLENDALE

11:00 AM - 7:00 PM



ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ
ԳԻՐԶԵՐՈՒ ՎԱՃԱՌԶ
ՓՈԶԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՆԱՐՏԻ ՄՐՑԱՇԱՐԶ
ՀԱՍԱԴԱՍ ԵՆՇԵՐ



**Sako • Robert Chilingarian • Ararat Amadyan • Hovik Krikorian
Harut Hakopyan • Armen Hovanissyan • Sokrat • Artsrun
Vahe Nersisyan • Alfred • Alen • Levon Katerjian • Maggie
Vartan & Siranush Gevorkian Dance Academy**